№ 57 ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 15

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 15 № 57

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱԲԾԵՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ **1906** ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 ռուբլի։ Մարտի 1-ից մինչև 1 յունիսի 2 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բաղաքնայա և Բարօնկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Հայրենեաց ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿՆԻ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով։ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“ իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

ՁՄՏԿԱԿԱՆ ՏՕՆԵՐԻՆ ՆՈՒԻՐ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ

ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԱՆԵԱՆԻ

1) «Որբիկների արցունքները» . . . . . 30 կ.
2) «Երկու պահլաւան», (Սասունի հիմնադիրները) . . . 25 կ.
3) «Պտիկ Մհեր» . . . . . 25 կ.
4) «Սասունցի Դաւիթ», I հ. 40 կ. II հ. 40 կ. Նոյնը մի գրքում. 80 կ.
5) «Զգացմունք» . . . . . 40 կ.
6) «Հէնրիխ Պետասլոյցի» (մանկավարժական). . . 30 կ.

Այս գրքերի վաճառման արդիւնքի 20% յատկացվելու է դժբաղդացած կողէնցիների օգտին։ Դիմել Կենտրոնական, Դուստէնբէրգ, Թառայեան և Զաքարեան գրավաճառներին, իսկ հեղինակին դիմողները կընտանան 30% զեղչ, կուղարկվի կանխիկ, նաև վերադիր վճարով։ Հասցէն՝ Шулаверъ, Григорію Баласаняндъ. (առ) 8—10

Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնից

Ի ԴԻՏՈՒԹԻՒՆ ՏԱՆՏԵՐԵՐԻ

Ի նկատ առնելով, որ շատ ժողոցներում, նոյն իսկ քաղաքի կենտրոնական մասում, մայթերը փչացել են, ուստի և նրանց վրա կը հաւաքվի անձրեւի ժամանակ, շատ տեղերում մայթերը բոլորովին չեն շինված, մանաւանդ արուարձաններում, մի քանի տեղ էլ մայթերը չափազանց նեղ են, մի բան, որ դժուարացնում է անց ու դարձը նրանց վրայով— քաղաքային վարչութիւնը, պահպանելով անցորդների շահերը, յիշեցնում է բոլոր տանտէրերին, որ Թիֆլիսի քաղաքային խորհուրդը 1905 թ. հոկտեմբերի 8-ին հրատարակել է պատգամ որոշումներ Թիֆլիս քաղաքի փողոցներում մայթեր շինելու և պահելու մասին, և այդ որոշումներով կատարելապէս նախատեսված են արտաքին տեսքը, լայնութիւնը և այն նիւթերը, որոնցով պէտք է շինվեն մայթերը։ Ցիշված պատգամի որոշումները կարելի է ամեն օր ստանալ շինարար բաժանմունքի դիւանատունը։

Քաղաքային վարչութիւնը նախազգուշացնում է, որ այն անձինք, որոնք մայթերը չեն շինի և չեն վերակազմի ըստ պատգամների՝ կենտարկվեն օրենական պատասխանատուութեան՝ համաձայն հաշտարար դատարանից տրվող պատիժների կանոնագրութեան 29 յօդուածի և, անկախ սրանից, աշխատանքները կը կատարվեն վարչութեան կողմից ի հաշիւ տանտէրերի։ 97. 1—2

Բ Ա Ժ Ե Ն Ա Պ Ե Տ

ԳՐԻԳՈՐԻ ԵՕՍԻՖՕՎԻՉ ԳՈՒՐԳԷՆՕՎ

Թարկովի համալսարանի մանկաբարձական և գինեկոլոգիական կլինիկայի նախկին օրենական (պրոֆէսօր Տօլչինովի) ընդունում է մանկաբարձական և կանանց հիւանդութիւններ ունեցող հիւանդներին։ Առաւօտեան 10—12 ժ. և երեկոյեան 5—7 ժամը։ Գոլովինսկի № 12, տուն Մգիվանիի, Արտիտասական ընկերութեան հանդէպ։

(չ.հ.ու.) (առ) 1—10

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նորից յիշեցնում ենք. Վերջին տեղեկութիւններ. Դէպքերը Վրաստանում. Մամուլ. Կղերական մի նոր անսերողամտութիւն. Բռնութեան մահվան պատժի դէմ. Տեղեկութիւններ գաւառից. Քաղաքային խորհրդի նիստը։ Ընտրութիւնների շուրջը. Ակամայ բոյկոտ. Նոր ոտնձգութիւն. Մեղայական թերթ. Նամակ Ախալցխայից. Ծագող կիսալուսինը. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ։

ՆՈՐԻՑ ՅԻՇԵՑՆՈՒՄ ԵՆՔ

—

Եթէ բօպէն կորցրիք, այլ էս անկարող կը լինէք օգնել։

Այդ խօսքերով մենք դիմում ենք մեր զանազան յանձնաժողովներին, որոնք նպատակ են դրել տալ աղէտի ենթարկված գիւղացիներին սերմացու գարնացան անելու համար։

«Մշակի» մէջ տպված հաղորդագրութիւններից յայտնի է, որ շատ տեղերում արդէն սկսել են հերկել հողը և պէտք է սկսեն շուտով ցանել։ Եթէ մենք անկարող լինենք ժամանակին սերմ հասցնել գիւղացու ձեռքը, մենք նրան մատնած կը լինենք քաղցածութեան առաջիկայ տարում և պարտաւոր պէտք է լինենք պահպանել բազմաթիւ ընտանիքներ ժամանակաւոր օժանդակութիւններով։

Մեր երեկվայ համարում առաջ բերած թւերից պարզվեց, որ Զանգեզուրի միայն մի քանի չափազանց վնասված գիւղացիներին օգնելու համար անհրաժեշտ է առնուազն 10,000 ռուբլի։ Իսկ եթէ ուշադրութեան առնենք և ուրիշ գիւղեր, այլ և հաշուի առնենք նաև լրջական եկեղի ու գործիքների անհրաժեշտութիւնը, մենք կը տեսնենք, որ պահանջվող գումարը պէտք է հաշվել մօտ 150,000 ռուբլի։ Մենք դեռ չենք խօսում տուերված գիւղերի տների վերանորոգման և ուրիշ ծախքերի մասին։

Ամենաներքնաւոր, ամենահերթական պահանջը սերմացուի պահանջն է, որը և չը պէտք է յետաձգել։ Պէտք է չը խնայել ազատ գումարները այդ նպատակին ծառայեցնելու, որովհետև այս ոչ միայն մի օժանդակութիւն է, այլ և մի արդիւնաբերական ձեռնարկութիւն, որ գիւղացուն կը վերադարձնէ իր նախկին ինքնուրոյն դիրքը և կազատէ նրան մուրալու և ուրիշին դիմելու ծանր դրութիւնից։

Մի հարց է ծագում այստեղ։ Արդեօք կարելի է մեր գաւառներում գտնել սերմացու կարօտ գիւղացիների համար։ Մեր ժողոված տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ օրինակ Զանգեզուրի գաւառը, որ ամեն տեսակներից մէկն է կենտրօնական տեղերից, կարելի է հաւաքել մերձակայ տեղերից բաւականաչափ սերմացու։ Ուստի պէտք է շտապել փոյթ հասցնելու Գօրիս՝ սերմացու գնելու և բաժանելու գործը կարգաւորելու համար։

Անկասկած՝ շատ ցանկալի է այս գործի գլուխ կանգնէր մի յանձնաժողով, որը կազմված լինէր տեղական հայ ազգաբնակութեան ներկայացուցիչներից, որպէս զի գումար ուղարկողները աւելի վստահութեամբ վերաբերվէին դէպի գումարների գործադրութիւնը և ամբողջ գործի նպատակայարմար կազմակերպութիւնը։

Այն, ինչ որ ասացինք Զանգեզուրի մասին, վերաբերում է և միւս տեղերին։

Անհրաժեշտ է, որ օգնութիւնը լինի արագ և անյետաձգելի։

Մենք մի երկու անգամ հրաւիրել ենք այդ գործի վրա ուշադրութիւն։ Այժմ նորից անում ենք այդ, որովհետև հարցը համարում ենք չափազանց կարևոր և էական։ Թող կրկնած լինենք մեր յորդորը և խորհուրդը, որպէս զի նորից յիշեցնենք այն մեծ պարտաւորութիւնը, որ ծանրանում է մեր բոլորի վրա օգնելու մարդկանց այն ժամանակ, երբ դա ամենից շատ հարկաւոր է։

Եթէ խեղճ գիւղացիները ամեն օր անկարող են իրանց ձայնը հնչեցնելու մեր յանձնաժողովներին, այդ մասին յիշեցնում են հասարակական օրգանները։

Ով ականջ ունի լսելու թող լսէ։

Զը լինի թէ ուշանանք։

Ա. Բալանթար

Տպագրելով այսօր մեր աշխատակից պ. Շահրիարի նամակը, որով հրաւէր է կարդում հայ հասարակութեան բոլոր խաւերին ձայնակցել այն բողոքներին, որ ռուսաց ժողովուրդը սկսել է այնքան մեծ թափով արտայայտել և պահանջել մահվան պատժի վերացումը, խմբագրութիւնս յայտնում է, որ ուրախութեամբ կը հիւրընկալէ իր էջերում բողոքները և ապա կուղարկէ «Рус. Вѣдомости» լրագրի խմբագրութեան, կցելու այն անհամար բողոքներին, որոնք ուղարկվում են այդ խմբագրութեան Ռուսաստանի զանազան անկիւններից։

Մենք համոզված ենք, որ հայ ինտելիգենցիան, որ միշտ այնքան զգայուն է եղել դէպի հասարակական հարցերը, թէ քաղաքներում թէ գիւղերում, կը շտապէ այս անգամ ևս արձագանք տալ կոչին և իր ձայնը ևս միացնել ռուս ժողովրդի այն ահեղ ձայնին, որով նա պահանջում է ջնջել ռուսական օրէնսդրութիւնից մահվան պատիժը իբրև մի անբարոյական, հակամարդկային և աննպատակ ակտ։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Գանձակ, 12 մարտի

Ձեզ յայտնի է, որ Թօփալհասանլու թուրք գիւղը աւերված է և նրա բնակիչները գնացել են զանազան տեղեր, իսկ մեծամասնութիւնը հաստատվել է Գանձակի Բաղմանլար թաղումը։ Այժմ հարց է ծագել՝ թէ պէտք է արդեօք թողել որ թօփալհասանլուեցիները վերադառնան և վերաբնակվեն իրանց նախկին տեղերում, թէ նրանք համարվեն առ միշտ հեռացած իրանց գիւղից։

Թօփալհասանլուեցիների վերաբնակման դէմ են և գերմանական կօլոնիստները, որովհետև թօփալհասանլուեցիները մշտապէս վնասներ են հասցրել գերմանացիներին իրանց յարձակումներով և կողոպուտներով։

Հարցը պէտք է քննվի վարչական տեղական ատեաններում։

—

Գանձակ, 12 մարտի

Հայերի և թուրքերի շրջաններում խօսվում է Մօլլաղալու, Զայլու և Նորաշէն թաղերի փոխանակութեան առաջարկի մասին։ Համաձայնութիւն դեռ չէ կայացել, բայց հարցը անլուծելի չէ համարվում։ Այն հանգամանքը, որ տները այդ թաղերում բոլորովին քանդված են և աւերված, մի որոշ ատիճան պարզ է դարձրել խնդիրը։ Տները շինելու թէ հին և թէ նոր տեղում մի և նոյն ծախքը կը պահանջվի։ Տեղական վարչութիւնը ապահովում է կամաւոր փոխադարձ համաձայնութեան, որպէս զի գործին ընթացք տայ։

—

Գանձակ.

Զը նայելով, որ այժմ արդէն մարտ ամիսն է, բայց մեր այգեպէտները դեռ ևս չեն սկսել իրանց այգեգործական աշխատանքները։ Այդպիսի անտարբեր վերաբերմունքի պատճառները դէպի իրանց շահերը շատ շատ են,—անկարգութիւնները, ազատ գումարների և քանաւոր ձեռքերի բացակայութիւնը ու «կարմիր ծիծաղի» կրկնվելու երկիւղը։ Թուրք այգեգործները ներկայացուս համեմատաբար աւելի լաւ պայմանների մէջ են գտնվում քան հայերը։ Նրանց մօտ, բացի կապիտալից, այգիների մշակութեան համար բոլոր բանը հնում է, իսկ հայերի մօտ շատ բան է պակասում։ Այսպէս օրինակ, հայ այգեպէտները առաջ վարձում էին պարսիկ բանւորներ, իսկ այժմ ոչ մի վարձատրութեամբ նրանք չեն համաձայնում հայերի մօտ աշխատելու գնալ։ հայ այգեպէտները խաղողի մատներ, ցցեր, ուռիների ճիպոտներ և այլ պարագաներ, պարարտացման համար աղբ գնում էին թուրքերից։ Բայց վերջիններս բօյկոտ են յայտարարել հայերին և այժմ թուրքը խաղողի մատները չի համաձայնվի ոսկու քաշով փոխարինել հայի հետ։ Հայերը աշխատաւոր ձեռք էլ չունեն. հայ բանւորները տասնեակներով թողնում են Գանձակը ու հեռանում, իսկ գիւղացիները հազիւ թէ օգնութեան հասնեն այգեպէտերին իբրև բանւորներ։ Մի խօսքով մեր հայ և թուրք այգեպէտերը ոչ մի միութենական բան չեն տեսնում իրանց առաջ։ Դարունը դեռ առաջիկայում է...

(Ե.)

—

Խանքենդ-աւան, 8 մարտի։ Անցեալ յունվարի 27-ից մի յատուկ յանձնաժողով, բաղկացած հայերից և թուրքերից, շրջեց ամբողջ Շուշու գաւառը և բոլոր բնակիչներին, հայերին և թուրքերին աւետեց Շուշում կայացած հաշտութիւնը և յորդորեց թողնել անմիտ կոտորածն ու աւերը, ապա սովորական կեանք վարելով աշխատանքի վերադառնալ։ Զգալի էր հայ գիւղերի կանանց լայն ու կոծը, որոնք յանձնաժողովին դիմաւորելով՝ խնդրում էին այդ հաշտութիւնը հաստատուն հիմքերի վրա դնել։ «Մեր որդիքը, մեր փայփայած սիրելիները ընկան մեր ձեռքից, արտասվելով ասում էին նրանք, ի սէր Աստուծոյ, բաւական համարել տուէք, վերջ դրէք այդ կոտորածին ու աւերին»։ Աննկարագրելի էին նրանց արտասունքն ու խօսքերը։ Թուրք գիւղերումն էլ խաղաղութեան լուրը, թէև դժուարութիւնով, բայց էլի ընդունվեց, սակայն յետոյ պարզվեց, որ առ երես, միայն գեներալ Գոլոշչապովի սպառնալիքից ընկճված։

Խաղաղութիւնը ժողովրդին յայտնվելուց յետոյ, Գիւլափլուի թուրքերը նորից հրացաններ են արձակել հայերի վրա, որի մասին խաղաղաբար յանձնաժողովը սաստիկ պատուէր էր տուած ոչ մի հրացան չարձակել, թէկուզ աննպատակ կամ որսի ժամանակ, բայց այդ պատուէրը քանդողը առաջինը թուրքերն եղան, որից յետոյ, մի քանի օր անցած, մալիբէկլուեցիք սպանեցին շուշիքենդցի Առաքել Առուշեանցին և կրակեցին սրա տունը Փիրամաքում, Գիւլափլուում սպանեցին ուզուեցի Գրիբրիէլ Օհանեանցին և Թէսոնին, կրակեցին Աւդուռի և Միւրիշէնի մարգերն ու խոտի դէզերը, Շելլուի թուրքերը, առաջնորդութեամբ Շամիր բէգ Փիրումեանցի (սա նախիջևանցի բէգերից է և վերջերս ուրացաւ լոյս հաւատը և ապա իր քրոջ աղջիկներին փախցրեց՝ տարաւ Աղդամ և թուրքերին տուեց կնութեան) գողացաւ նախիջևանիկցիների 200 խոշոր, ապա կոտրեցին սրանց այգիները, Մալիբէկլուի թուրք սէյիդները գողացան հարեւցիների այծերը, խալիփալուցի թուրքերը յարձակվեցին անտառապահ Խաչատուր Մարտիրոսեանցի և Յովհաննէս Աւետիսեանցի վրա՝ սպանելու, բայց սրանք փախչելով ազատվեցին։ Այս ամեն յանցագործութիւնները հեղինակ թուրքերը, ամենքն էլ, մեծ մասամբ են անպատիժ և երկու ազգերի յարաբերութիւնները այսօր հետզհետէ նորից լարվում են։

—

Խաղաղաբար յանձնաժողովը գիւղերը շրջելիս տարածում էր ժողովրդի մէջ հետեւեալ կոչը, տպագրված ռուսերէն, հայերէն և թուրքերէն լեզուներով, որին ստորագրել են 24 հայ և 22 թուրք.

«Կոչ բոլոր հայկական և թուրքական ազգաբնակութեան։ Շարունակաբար եղբայրասպան կոտորածից յետոյ, որը կորստաբեր հետեւանք թողց ազգաբնակութեան բարօրութեան վրա, շատ արեան և արցունքի արժէքով, շնորհիւ գեներալ Գոլոշչապովի նախաձեռնութեան, Շուշու քաղաքի թուրքերի և հայերի մէջ վերականգնվեց հաստատուն խաղաղութիւն։

Այդպիսի ուրախալի եղելութեան մասին, Շուշի քաղաքի հայկական և թուրքական ազգաբնակութեան լիազօրները իրանց հաճելի պարտքն են համարում տեղեկացնել Շուշու և սահմանակից գաւառների, այն է՝ Զանգեզուրի, Զիւնդիրի և Ջերբայիլի բոլոր հայերին և թուրքերին։ Խաղաղութիւնը և բարի հարեւանական յարաբերութիւնները հայերի և թուրքերի մէջ վաղուց էին անհրաժեշտ։ Այդ կարող են հաստատել թէ այրի կանանց և որբերի արցունքները, թէ քարուքանդ եղած գիւղօրայքը և թէ չը հերկված դաշտերը։

Շուշի քաղաքի հայկական և թուրքական ազգաբնակութեան լիազօրները 1906 թ-ի յունվարի 23-ի նիստում որոշեցին. որ և է միջոցով անդորրութիւնը և խաղաղ կեանքի ընթացքը խանգարելու դէպքում, մեղաւորները հասարակութեան դատավճռով կաքսորվին քաղաքից։

Լիազօրները խնդրում են բոլոր հասարակութիւններին խաղաղութիւնը խանգարողների հետ վարվել նոյնպէս խիստ։

Խաղաղութիւնը խանգարողները ժողովրդական թշնամիներ են, և նրանց հետ պէտք է վարվել այնպէս, ինչպէս անիծեալ թշնամիների հետ։

Այս կոչը ժողովրդին յայտնվելուց յետոյ, կատարվեցին վերոգրեալ մի շարք յանցագործութիւնները, բայց թուրք հասարակութիւնը մինչև այսօր ծանված է պահում յանցաւորներին, ժողովրդի թշնամիներին։ Այս մէկ։ Երկրորդ՝ բոլոր պատերից և յայտնի տեղերից կցրված է Շուշու գաւառապետ կապիտան Ֆրէյլիխի հետեւեալ յայտարարութիւնը. «Յայտարարում եմ Շուշու գաւառի ժողովրդին, որ Գանձակի նորին գերազանցութիւն գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ արգելվում է ամեն տեսակ զէնք կրելը թէ Շուշի գաւառում և թէ Շուշի քաղաքում. հակառակ վարվողը կենթարկվի կամ եռամեայ բանտարկութեան կամ 3000 ռուբլի տուգանքի։»

—

Այս վերջին օրերումս, խաղաղութիւնը ժողովրդին յայտնվելուց շատ յետոյ, Աղդամից թուրքեր եկան Խանքենդ, կօզակներից մէկը պատահաբար խուզարկց մէկին և ի մեծ զարմանք, գտաւ նրա գրպանում մի ատրճանակ և մի դաշոյն։ Թուրքին նախատելով՝ «եթէ քո սրտում նախանձ չը կայ դէպի հայերը, ինչու ես վերցրել այդ զէնքերը», տարան իշխանութեան դուռը և նրան փոխանակ, ըստ Փրէյլիխի յայտարարութեան 3000 ռուբլի տուգանքի ենթարկելու կամ 3 ամիս բանտարկութեան, ազատ թողին, մինչև անգամ խոստումներ արին վերադարձնելու նրան այդ զէնքերը։ Այս այսպէս լինելուց յետոյ, ուրեմն բանտարկութիւնը, խստութիւնը, ճնշողութիւնը, զինաթափութիւնը, ռմբակոծութիւնը, աքսորանք ուղարկելը միայն հայերի համար են. Թուրքերը ամեն տեղ էլ անմեղ գառնուկներ են և նրանց ամեն բան զիջվում է։ Այսպէս թուրքերը նորից երես առնելով խրախուսվում են, զինվում են և քարոզված խաղաղութիւնը չլսում են։ Եթէ, փակագծում ենք ասում, վերոգրեալ յանցանքները հայերը գործած լինէին, արդեօք թուրքերը երկիրը, դիւանատները տակն ու վրա չէին, ան և իշխանութիւնները այսպէս սառնասիրտ աչքերով կը նայէին այդ ապօրինի գործողութիւններին։

Հետզհետէ հայերի և թուրքերի յարաբերութիւնները լարվում են, այնպէս որ ժամանակին պէտք կը դան Գոլոշչապովներ և Թընդանօթներ։

Եթէ իշխանութիւնը ցանկալի է որ երկու ազգերի մէջ կատարեալ հաշտութիւն լինի, փոխանակ երկու ազգերի ներկայացուցիչներից ժողովներ կազմելու, որտեղ զարձեալ յետին մտքով քօղարկված մտանութիւններ են որ կատարվում են հայերի դէմ, նոյն իսկ բարձրագոյն կրթութիւն ունեցող անձանց ձեռքով, պէտք է հնինելին փոխել ագիտնիսատրացիայի կարգերը, այլ կերպ գործադրած միջոցներից ոչ մէկին էլ, նոյն իսկ պալատներում կայացած ժողովները, չեն ներգործիլ գողութեան և մարդասպանութեան մէջ վարժված, սնված ու մեծացած թուրքին կամ քիւրդին։ Հաղաթաւոր խաղաղացնող ճառերը էլ կարդաս նրան՝ միևնոյն է, առաջիկ այնպիսի լեղու կը բանեցնէ, որ կը զարմանաս, կասես, սա անմահական դրախտի երջանիկներից է. բայց սարն անցկացաւ թէ չէ, իսկոյն գողութիւն ու սպանութիւն պէտք է գործէ, որովհետև այդ նրա բնածին արհեստն է։

Ժողովներով չեն զսպվիլ ոչ Զանգեզուրի քիւրդերը և ոչ Աղդամի դաշտավայրի թուրքերը, որոնք ի մանկութենէ վարժված են միայն զէնք բանեցնելու և սպանութիւններ գործելու մէջ։ Սրանց միայն ծանր պատիժներն են ճանապարհ բերում, որ այժմ կատարեալ բացակայում են։

***

—

ԴԷՊԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

—

Կովկասեան Փոխարքան ստացել է հետեւեալ հեռագիրը.

Նօվօ-Սէնակի, 12 մարտի։ Պատիւ ունեմ հաղորդելու Ձերդ Պայծառափայլութեան, որ Քութայիսից Խնրի վրայով Նօվօ-Սէնակի գնալիս ճանապարհին խօսել եմ բոլոր գիւղական համայնքների հետ, որոնք հանդիսաւոր կերպով, հաղաւաւոր բազմութեամբ, Թագաւոր Կայսեր պատկերով, հոգևորականութեան հետ, խաչ ու խաչվառով ներկայացան ինձ։ Օրինակելի կարգապահութիւն էր տիրում ամեն տեղ, զղջումը կատարեալ էր։ Զէին կատարել միայն կալուածատէրերի պահանջը, որը շուտով կաշխատեն բաւարարութիւն տալ։ Նօվօ-Սէնակի հրապարակի վրա նոյնպէս դիմաւորեց քաղաքի ամբողջ ազգաբնակութիւնը, զղջում և անձնանուիրութիւն են յայտնել։ Երեկ Շօրապանի գաւառում պահակները հրացանագործութիւն են ունեցել աւազակների հետ, սպանված են աւազակների պարագլուխներից երկու հոգի, իսկ պահակներից՝ մէկը, իսկ մէյմէկներ հանդուգն կերպով հետևում են աւազակներին։ Այսօր Օզուրգէթից ստացել եմ հետեւեալ զեկուցումը. Գուրիայի 25 համայնքների ազգաբնակութիւնը իրանց ընտրեալների միջոցով խնդրում է առ ոտս Նորին Կայսերական Մեծութեան արկանել իրանց ազատը՝ ներել իրանց մոլորութիւնը, որ առաջացել է տգիտութիւնից ու արատաւոր և չարամիտ մարդկանց շնորհիւ. Ամենաողորմածութեան հովանու տակ ընդունել իրանց, որ գոնէ էն կատարած սխալը և քաւում են արդէն. գթութեան արժանացնել իրանց անկիւղծ սիրոյ ու անձնուիրութեան հաւատարիմ հպատակութեան զգացմունքները և ուրախացնել իրանց պաշտելի Մեծ-Թագաւորի բարեգթութեամբ և ներողամտութեամբ զղջացողներին։

Գեներալ-մայոր Ալիխանով

—

Բ ա թ ո ւ մ։ Տեղական ոստիկանութիւնը ոլոնում է այնպիսի մարդկանց, որոնք առաջ ու է մասնակցութիւն են ունեցել զօրքի հետ տեղի ունեցած ընդհարումների կամ նրման գործերի մէջ, բայց նրան չէ աջողվում։ Ինչպէս գեներալ Վասիլիեվի նախկին կարգադրութիւնից երևում է, վերջինը նոր միջոց է գտել չար մարդկանց ձերբակալելու համար։ Վասիլիեվը կարգադրութիւն է արել, որպէսզի բոլոր տեղական բժիշկները արձանագրեն այն բոլոր մարդկանց, որոնք ատրճանակի, կամ հրացանի հարուածից վիրաւորված են, և դրա մասին յայտնեն ոստիկանութեանը. այդպիսի հիւանդներին իրանց ձեռքն են ուղում դցել։ Բայց այդ կարգադրութեան հեղինակները մի բան մոռացել են—որ բժիշկը լրտես չէ, և բացի դրանից, բժշկական-բարոյական փիլիսոփայութիւնը պարտաւորեցնում է հիւանդի գաղտնիքը պահել այնպէս, ինչպէս քահանան ապաշխարութեան ժամանակ խոստովանած յանցանքները։ Բայց ներկայ ժամանակ ոլ է հետևում էտրիպային և դրա նման բաներին։

Այս ամենը զարմանալի չէ։ Ի՞նչ կը նշանակէ քաղաքական վարչութեան, բժշկական ընկերութեան վիրաւորանքը, երբ մեր ժամանակից գեներալ-նահանգապետները դատաստանական վճիռներին, այն էլ զինուորական դատաստանի վճիռներին, կոտրած ձուի կէսէպի չափ նշանակութիւն անգամ չեն տալիս։ Եթէ չէք հաւատում՝ լսեցէք հետեւեալը. Իվանովի սպանութեան լուրը ամենքին յայտնի կը լինի. ոչ ոք մոռացած չի լինի, որ այդ սպանութեամբ օգտվեցին մի կարգի մարդիկ, և քիչ էր մնում վրացիների և Թուրքերի մէջ ընդհարում տեղի ունենար։ Լրագիրները այն էլ տպեցին, որ Իվանովի սպանութեան մէջ մեղադրվում են Մէխանիչվիլին, Կէդէվանէն և Լօմէնիան։ Անցեալ փետրվարի 2-ին զինուորական դատարանում քննվեց Իվանովի գործը և մեղադրեալներին քննութիւնը արդար ճանաչեց. բացի դրանից՝ այն էլ ակներև դարձաւ, որ մեղադրեալներից մէկը—Մէխանիչվիլին մէկ աչքով կոյր է եղել, իսկ միւս աչքով հազիւ կարողանում է տեսնել։ Արդար ճանաչված մեղադրեալները դատաստանական վճռից յետոյ անմարբեր սպասում են, թէ երբ պէտք է բանտից ազատվեն, բայց ահա մէկ ամսից աւելի է սպասում են այդ երջանիկ օրին։ Այս տեսակ վարմունքների շատ օրինակներ կարող եմ բերել. բայց այսօր անվանումը և կամայականութիւնը այնպէս մեծ ծաւալ են ստացել, որ ոչինչ բանով ձեզ չեմ զարմացնի։ (Ցնօր. Փուրց.)

—

Մ Ա Մ Ա Ռ Լ

—

Պարիզի «Անահիտ» հանդէսի վերջին համարի մէջ (№ 1—2) պ. Արշակ Զօրանեան մի հմտալից ուսումնասիրութիւն է հրատարակել Խաչատուր Աբովեանի ծննդեան հարիւրամեակի առիթով, որի մէջ գրական և գեղագիտական վերլուծման է ենթարկում Աբովեանի աշխատութիւնները և գտնում է, որ նրան կարելի է համարել և «հայկական երգիծաբանութեան հայրը»։

Ահա մի կտոր «Վէրք Հայաստանի» մասին արտայայտած կարծիքի.

Բնանկար մըն է՝ իրօք Աբովեանի գործը, բնանկար մը տարօրինակ ճոխ, հզօր ու Տրիներանգ, անսպառ ազբիւր բիւրաւոր ապաւորութեանց ու խորհրդածութեանց «Վէրք Հայաստանին» հոն կը կազմէ տիրական տարբը,—լեռը, ամպերու մէջ կորսուած իր ձիւնապսակ ու վեհ կատարներովը, իր արտաւիրներով լեցուն գահավէժներովը, իր կանաչագեղ ծաղկալից կողերովը, իրմէ քղխող արծաթափայլ առուակներովը, բոլորը՝ թանձր խաւարի մը մէջէն ծագող նոր արեւի մը արիւնովը գունաւորուած։ Բայց, «Վէրք Հայաստանին» ոլորան ալ ամէնէն կարևորը Աբովեանի գործերուն, միակ նշանակալիցը չէ անոնց մէջ. բազմաթիւ, բազմաձև են անոնք, և անոնց ամէնէն անշնչին մէջ իսկ նշանաբի նշոյլ մը կարելի է գտնել. լեռան շուրջը՝ կը տեսնես անհուն դաշտավայր մը, հոս արօտ մը քաղցը ու հանգարտիկ, ուր հօտերը կարածուին հովուին սրինգով, անդին անտառ մը խորհրդաւոր ուր գազաններ կը թափառին, հոս՝ հեղեղ մը փրփրաբեղ որ կատաղաձայնէ կը խոյանայ ժայռերի վրայէն, հեռուն՝ ուրուականը հին փլած քաղաքի մը նշխարներուն, այստեղ պարտէզ մը ուր մանուկներ կը խաղան, անդին՝ հովիտներին մօտ, բերդի մը չարագուշակ կմախքը։

Յօդուածագիրը չէ մոռանում խօսել և «Վէրք Հայաստանի»ի գլխաւոր թերութիւնների մասին, որոնց գլխաւորը այն է, որ այդ վէպը որոշ յատակագիծ չունի։ Սակայն այդ թերութիւններով հանդերձ՝

Վէրք Հայաստանին հայ գրականութեան ամէնէն հսկայ յիշատակարաններէն մին ըլլալէ. ինչ որ կայ հոն գեղեցիկ՝ այնքան բարձրօրէն գեղեցիկ է, այնքան անզուգականօրէն հզօր, որ գործին ամբողջական ընթերցումէն մեացած տիրական տպաւորութիւնը կըլլայ՝ անխուսափելիօրէն ընկճող հիացում մը,—խառնուած միայն՝ նրբաճաշակներուն համար՝ աւարտքով մը որ Աբովեան երկրորդ ընթերցմամբ մը մաքրած չըլլայ վէպէն իր պակասութիւններէն։

«Անահիտ»ի նոյն համարի մէջ աչքի է ընկնում յայտնի հայ բանաստեղծ դօքտօր Յ. Թերիաքեան խանի թարգմանութիւնը՝ Ֆըրդօվսիի Շահնամէից, որ մեր թարգմանական գրականութեան մէջ մի ամբողջ գանձ պէտք է կազմէ։

—

«Յառաջի» կիրակի օրվայ համարը ամբողջովին նուիրված է հանդուցեալ Բ. Միքայէլեանի յիշատակին։ Մեզ վրա հաճելի տպաւորութիւն թողեց Ս. Զաւարեանի յօդուածը «Անցած օրերից» վերնագրով, որից մի քանի կտորներ առաջ ենք բերում այսօր.

80-ական թուականներին էր։

Մենք Թիֆլիսի միջնակարգ դպրոցի աշակերտներս, բաժանուած մանր խմբերի, զբաղւում էինք «ինքնազարգացմամբ»— պարապում էինք ազատասիրտ գրականութեան ընթերցանութեամբ, քննում էինք տնտեսական ու քաղաքատնտեսական խնդիրներ, շօշափում. էինք մատերիալիզմի, ինքնազարգացման թէօրիան։

Խմբերը գաղտնի էին. անդամները վճարում էին փոքրիկ անդամավճարներ խմբական՝ լէգալ առձեռն ունենալիք գրքերի և կենտրօնական ազատ գրադարանի պահպանութեան համար։ Ընդլերական օգնութիւնը, ինչպէս և (ռուսաց) Կարմիր Խաչին մասնակցելը, համարեա բոլորիս քաղցը պարտականութիւնն էր։ Անսանձ քննադատող, բայց իդէալական նիհիլիստական հոսանքը, դեռ ուժեղ էր Ռուսաստանում և մենք բոլորս, փոքր կամ մեծ չափով, ներշնչած էինք ճնշածներին օգնելու, ազատութեան ու հաւասարութեան վեհ գաղափարներով։ Հայկական հարցը գոյութիւն չունէր մեզ համար, մանաւանդ որ խմբերն էլ ունէին խառը կազմ՝ հայ, վրացի, ռուս, շատ անգամ երկու սեռից։ Ռուսաց լեզուն մեր մայրենի լեզուն էր, ռուս գրականութիւնը, ռուս կանանը մեր սր

ծոյց տալով ապա այն էվոլիւցիան, որ կատարվեց Բ. Միքայէլեանի ազդեցութեան ներքոյ, երբ համամարդկային գաղափարի կողքին իբրև բնական մի պահանջ զրվեց և հայրենասիրութեան գաղափարը, Զաւարեան շարունակում է.

Հայ ժողովրդի մասին մտածելը մեզ համար դարձաւ նոյնչափ արդարացի, ինչ չափ և ռուս գիւղացու մասին հոգալը։

Եւ այսօր էլ, քանի և հինգ տարուց յետոյ, ամեն անգամ երբ հայն անարգւում և հալածւում է, երբ հայն յուսահատեցնում է իր մթութեամբ ու կոպտութեամբ և նրա առաջնորդներն աշխատում են այլ խաւերում, վիճում են մարդկութեան մասին, ես յիշում եմ Քրիստափորի անկեղծ համոզեցուցիչ խօսքերը՝—լաւ... բայց, մինչև այդ, ինչ լեզուով պիտի զարգանան հայն, վրացին և այլ միլիոնաւոր բազմութիւնները, յանուն որ արդարութեան փոքրիկ ոչխարը չը պիտի արածէ ընութեան նոյն արօտներում, ուր պտտում է ուեւի խոշոր տաւրը. յանուն որ արդարութեան։

Եւ երբ 1890 թւին ազատարար և մարդասիրական գաղափարները սկսեցին սառնալ հայկական զոյն, յանուն թիւրքանային դաշը կացութեան բարեջոգան և միաժամանակ կարմրեցին մի քանի խմբեր ու հոսանքներ, ոչ ոք այնքան չը նպաստեց այդ խմբերի շարկաման ու փոխադարձ հասեցնելութեան, ինչքան Քրիստափորը։

Գաղափարական երիտասարդութեան մէջ կային թեթև ազասէրներ, որոնց երազը մխիթարն թիւրքահայի անկախութիւնն էր, կային արմատականներ, որ ուզում էին ուեւի արմատական-ազատական բարեփոխութիւններ մտցնել հայի կեանքի մէջ, կային նիհիլիստներ, հնչակեաններ։

Ծրագրական վէճերը շարունակում էին շաբաթներ, ամիսներ, ամեն մինը համարում էր իրեն անսխալական և չէր ուզում միւսին անել որևէ զիջում։ Սակայն, սկսուելիք ազատական կռիւը ծանր էր և ամեն ջանք թափելու էր «հինգ հայի մէջ երեք կուսակցութիւն» չունենալ։ Բոլորը այդ զգում էին, բայց չէին կարողանում գործել համերաշխօրէն։ Քրիստափորն էր, որ շնորհիւ իր հմայիչ ընաւորութեան, բոլոնական մի ընդհանուր հանդիպաւորաւ խմբակների մէջ և ամենից շատ նպաստեց հայ յեղափոխականների դաշնակցութեան կազմելուն։

Եւ ամեն անգամ, երբ գաղափարական շրջաններում թուլանում է համերաշխութեան միաքը, ամեն մինը յիշում է երեւի Քրիստափորի տեսակէտը։ «Բանական է եթէ մարդս անկեղծօրէն նէրուած է գաղափարի, ասում էր նա և համամիտ է քեզ հետ մօտակայ գործունէութեան նկատմամբ—այդպիսի մարդու հետ միշտ օգտակար է գործել ձեռք ձեռքի ուած»։

Դա ճիշտ էր տասը տարի առաջ, ճիշտ է հիմայ, ճիշտ կը լինի կարծեմ և ապագայում։ Դժբաղդաբար, այդ ճշմարտութիւնը իրականացնելու համար հարկաւոր է ոչ միայն նրա ճշտութեան գիտակցութիւնը, այլ և պէտք է ունենալ այն համբերատար ու հաշտեցնող ընաւորութիւնը, հարկաւոր է ունենալ այն բնական տակը, որով օժտուած են լինում միայն Քրիստափորի նման բացառիկ դրական անհատներ։

*

Մարսէյլի «Արմէնիա» թերթը խօսելով նախագահ Բուդվիլոնի զանազան հայաբնակ տեղերից դիմումների մասին, հայոց հարցի լուծման համար, ասում է.

Անշուշտ գովելի է հայ գաղթականներին արտայայտուած այդ փափաքն ու եռանդ. բայց թէ որչափ իրականալի է, այդ տարբեր հարց է։ Մենք կուզենք այդ հարցն ալ ուշադրութեան ներկայացուցել այժմէն որ մի գուցէ մեր ժողովուրդ ծայրայեղ յոյսեր տածելով ասոր վրայ, յետոյ երբ յուսախաբ դառնայ, միւս ծայրայեղութեան դիմէ և բոլորովին յուսահատի այս ազգի ազատութիւնէն։

Աւելնիկան իր գոյութեան 20 տարուան ընթացքին մէջ միշտ կրկնած է թէ մենք մեր նպատակի հասնելու համար պէտք է որ ներքին ոյժ գոյացուենք. արտաքին աջակցութիւններն ալ մղում մը կուտան մեր շարժման դէպ յառաջ, եթէ մենք արդէն ինքնին շարժելու կարմութեան ու դիրքին մէջ գտնուինք։ Նկատելով մեր ներկայ ներքին վիճակ, մենք շատ յոյս չունինք թէ Լա Հէյլի Վեհաժողովը պիտի կրնայ բաւարար լուծում մը տալ հայկական խնդրին. նոյն իսկ խնդիր է թէ կրնայ անցնել անոր օրակարգի մէջ անգամ։ Բայց ասով ըսել չենք ուզեր թէ պէտք չէ ընել այդ դիմումները. ընդհանրապէս յաջողութեան տարեկոյսը պէտք է աւելի կրկնապատկէ մեր աշխատանքի եռանդը։ Եթէ որևէ յաջող արդիւնք ալ չունենայ, գէթ տպիտ մը եղած պիտի լինի հայկական խնդրի մասին զաղափար տարածելու օտարազգիներին մէջ։

Արդարև այս ամէնքը չեն հասցուներ մեզ անմիջապէս մեր նպատակի. բայց, այսպէս թէ այնպէս, մէկ մէկ քայլեր են դէպի յառաջ, մեր նպատակի հասնելիք ճանապարհին վրայ։

*

«Յառաջը» իր երեկոյ համարում փորձում է պատասխանել մեզ։

Փոխանակ այդպէս պատասխանելու, աւելի լաւ է լռել և ոչինչ չասել։

Մենք վերջացած ենք համարում ներկայ բանակռիւը։

Բայց չենք կարող չը նկատել, որ «Յառաջի» վերջին զրուածքի նման պատասխանները զրական մնանկութեան մի մի վկայականներ են։

Լաւ կարդացէք ձեր պատասխանը, նա մեզադրական ակտ է ձեր դէմ։

Ցը նոր առիթ։

ԿՂԵՐԱԿԱՆ ՄԻ ՆՈՐ ԱՆՆԵՐՈՂԱՄՏՈՒԹԻՒՆ

Կղերը անուղղելի է։ Այս եզրակացութեան կարելի է գալ, կարդալով լրագիրների մէջ տպված այն լուրը, թէ Սինօդը ենթարկել է տուել խիստ պատժի Ալէքսանդրօպոլի յաշորդ Արսէն վարդապետ Ղամեանին այն պատճառով, որ այդ վարդապետը յանդգնել է քննադատել Սինօդի նորերս հրատարակած մի ծրագիր քահանայացուների ընտրութեան մասին։ Ուրիշ խօսքերով, հայոց Սինօդը պատժել է հայ հոգևորականին այնպատճառով, որ սա արտայայտել է ազատօրէն իր կարծիքը և քննադատել է Սինօդի մշակած ծրագիրը և այդ կարելի է մի այնպիսի ժամանակ, երբ նոյն իսկ աշխարհական բիւրօկրատական հրատարակել է խօսքի և կարծիքների ազատութիւն։

Սինօդի այդ կարգադրութիւնը դատապարտելի է և նոյն իսկ հակառակ հայոց եկեղեցու ոգուն և ուղղութեան։

Եւ պէտք է ուրախանալ, որ ծերունի Հայրապետը շատպել է ուղղել Սինօդի սխալը և վերջ տալ մի խնդրի, որ կարող էր անհաճելի բարդութիւններ առաջ բերել։ Այդ մասին մեզ հաղորդում են հետևեալ տեղեկութիւնները.

«Սինօդի հրատարակած քահանաների ընտրութեան կանոնների ծրագրի մասին քննական կարծիք յայտնելու համար Արսէն վարդապետը դատապարտվում է աքսորի։ Ալէքսանդրօպոլի ծխական հոգաբարձուները ժողով են անում՝ հեռագրով խնդրում Կաթողիկոսից քննութիւն նշանակել, իսկ վարդապետին թողնել իր պաշտօնում՝ զարդոցների շահերն ի նկատի առած։ Հոգաբարձուներն ուղարկում են էջմիածին պատգամաւորութիւն նոյն գործի համար։ Վեհափառը պատգամաւորներին ասում է՝ որ գնան Արսէն վարդապետին համոզեն, որ վարդապետութիւնից հրաժարվելու խնդիրը ետ վերցնի ու մնայ Ալէքսանդրօպոլում։ Երբ վարդապետը կատարում է այդ պահանջը, վերադարձած պատգամաւորները նորից խնդրում են նրան թողնել իր պաշտօնում։

Հակառակ ասած խօսքին, հեռագրով մերժում են հոգաբարձութեան մէջնորդութիւնը։ Նոյն օրը—մարտի 8-ին միացեալ հոգաբարձութիւնը արտակարգ ժողով է գումարում, պարմացած կրօնաւորական այդ խաղերից, նորից կարգի ոճով գրում են Վեհափառին թէ «բարդութիւններից խուսափելու համար խնդրում ենք Արսէն վարդապետին թողնել իր պաշտօնում, մեզմացնելով պատիժը»։

Էջմիածնի կրօնաւորները ժողովրդի պահանջի առաջ տեղի տալով՝ փոխում են վարդապետի մասին եղած բոլոր պատիժները, ու նրան թողնում իր պաշտօնում»։

ԲՈՂՈՔԵՑԷԲ ՄԱՀՎԱՆ ՊԱՏԺԻ ԴԷՄ

Նամակ խմբագրութեան

Թիֆլիս, մարտի 14-ին

Իմ երեկվայ «Մաքրի և փոստեր» յօդուածի մէջ («Մշակ» № 56), խօսելով այն զօրեղ շարժման մասին, որ ներկայումս սկսվում է Ռուսաստանում մահվան պատժի դէմ, ես հրաւիրեցի հայ հասարակութեանը միանալ այդ բողոքին և նոյնպէս պահանջել մահվան պատժի չնչումը։ Այդ կոչը ես արի այն համոզմունքով, որ հայը ևս, իբրև լայնածաւալ Ռուսաստանի քաղաքացի, իբրև քաղաքակրթված մարդկութեան անդամ, նոյնչափ շահագրգռված է մի բարբարոս օրէնքի չնչման մէջ, որքան միւս բոլոր քաղաքացիները և, հետևաբար, հայն ևս պէտք է կատարէ իր քաղաքացիական պարտականութիւնը։ Սակայն այդ բողոքը պէտք է կազմակերպել, որպէսզի նա լինի ոչ միայն անհատների այլ և հասարակութեան բողոք և պահանջ։ Այդ գործին կարող էր գլուխ կանգնել «Մշակը», որ միշտ արձագանք է տուել հասարակական թարմ հոսանքներին և հանդիսացել է հայ ժողովրդի առաջաւոր ու մարդասէր, բարոյականամտաստանական ձգտումների մաքի արտայայտիչ։

Բողոքը պէտք է կազմակերպել հեռեակայով։

Ամեն մի շրջան քաղաքացիների, գիւղացիների, առանց սեռի, դասակարգի, հասակի խտրութեան, պէտք է ուղղէ խմբագրութեան մի նամակ, բազմաթիւ ստորագրութիւններով, որի մէջ յայտնի այն միաքը, թէ համարելով մահվան պատիժը իբրև մի բարբարոսական ակտ, իբրև հակառակ մարդկային արժանապատուութեան, խղճմտանքին և արդարութեան՝ բողոքում է նրա դէմ և պահանջում է չնչել այդ պատիժը։ Այդ բողոքը կարող են գրել թէ հասատատութիւններ, հիմարկութիւններ, թէ մտանատը շրջաններ և թէ անհատներ։ Նշանակութիւն ունի այս հանգամանքը, որ բողոքողների թիւը շատ լինի, որպէս զի ստեղծվի մի զօրեղ հասարակական, ժողովրդական հոսանք մահվան պատժի դէմ։

Այդ բողոքները, արձագրելով «Մշակի» մէջ, խմբագրութիւնը կը հասցնէ այն կենտրոնական մարմնին, որ ատանում և ցուցակագրում է բոլոր բողոքները, «Руск. Вѣдомости» լրագրի միջոցով։

Շնորհալ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԵՐ ԳԱԼԱՌԻՑ

Զիգդամլու, մարտի 10-ին։ Գարունը սկսվել է։ Հայ շինականը 3—4 ամիս ատն մէջ անգործ փակված մնալուց յետոյ, կամաց-կամաց արօր ու գութանն է պատրաստում, երթևեկում է հանդը, հողի տակ թաղված այգին թափ է տալիս, միանգամայն աչքաթող անելով մահմեդական գիւղերի սահմանները մտիկ հոգած հողերը կամ արտերը։ Թէև համերաշխութեան գաղափարը երկու կողմից ևս համակրութիւն է գտնում, բայց կայ նաև մի տարբ, որ ուղղակի բաց է։ ութիւն է կազմում։ Այդ վերջին տարբը, մահմեդական խուժանի հաշվով ապրող՝ ջանբազարներն են, որոնց համար «խաղաղութիւն» բառը թարգմանաբար նշանակում է՝ «սովամահ լինել», ինչպէս ջրից հանած ձուկը։ Փետրվարի 24-ին մեր գիւղացիներից Արաքսի մօտերքը շրջողների վրա ամրանցնիք, Արաքսի հակառակ ափից, հրացան են արձակում. գիւղացիք այդ մասին յայտնում են տեղիս III մասի պրիստաւ պ. Ներսեսովին։ Փետրվարի 26-ին կօզակների մի խումբ զինված՝ բերդանկաներով, պատրօնդաշով՝ ջանբազարները։ Կօզակները չորսին բռնում են, իսկ մի քանիսը փախչում են։ Այդ բռնվածներին մեր գիւղով անցկացնելու ժամանակ գիւղացիք զարմանքով ճանաչեցին չիլիսանլուեցի յայտնի աւազակ՝ Կարա Շաբանօղլուն, որը վերջին ժամանակներս Երևանի բանտից փախել է։ Կօզակները տանում են Ղամարլու, պրիստաւի մօտ, իսկ վերջինը բաց է թողնում, ասելով թէ, չեզդամլուեցիները «անհոգիաս» տարրեր են, սրանք ոչինչ մեղք չունեն, կօզակներին չեզդամլուեցիք խմացել են և այլն։

Այս միջանկեալ դէպքը մէջտեղ բերեցի, որպէս փաստ, որ խաղաղութիւնը ընդհանուր ծաւալ կը ստանայ ազգաբնակութեան երկու կողմերի մէջ, եթէ այդպիսի մութ ոյժեր չը լինեն ժողովրդի խաւերի մէջ։

Երկիւղը և անվստահութիւնը կղզիացած գրութեան մէջ պահելով մի քանի մասնաւոր հայ և թուրք գիւղեր—ահա այսպիսի տեղերում, պաշարի պակասութիւնից և զանազան հիւանդութիւններից, խիստ զգալի աւերածութիւններ են առաջացել ազգաբնակութեան խաւերի մէջ։

Չլինելու մահմեդական գիւղը հայ ծաղկահատներ չայցելելու պատճառով՝ ծաղիկը փոքր երեխաներից մեծ թւով զոհեր է տարել։ Ծաղիկին օգնութեան են հասել կարմրուկը ու դիֆթերիան։ Այսպիսի վիճակի մէջ է եղել նաև Վերին Դարալու հայացանկ գիւղը։ Վերջինս ծաղիկից, կարմրուկից և դիֆթերիայից մեռածների թիւը հաշվում են 60-ից աւելի, սկսած նորածիններից մինչև 16—17 տարեկան պատանիները։

Պատմում են, որ Բռիւկ-Վեղդի մահմեդական գիւղում, ցորենը երկանաքարով ալալու ժամանակ (Ջրաղաց չը կայ), հերթի համար երկու թուրք իրար հետ կռւել՝ մէկը միւսին սպանել է։ Մինչդեռ խաղաղ ժամանակ օգտվում էին հայերի ջրաղացից։ Թուրքերի կողմից, ինչպէս պատմիչից երևում է, հիւանդութիւնը կատարեալ է, անցած գնացածը անդառնալի համարելով, կարծես զղջացել են, որ այդ տեսակ վարվեցին հայերի հետ, կամ աւելի ճիշտն ասած, չեն հասկացել որ հայերի մէջ կարող էր թաղնված լինել այդպիսի մեծ կորով։

Անցեալ ամառը մեր գիւղից հեռացած թուրքերը, երբեմն երթևեկում են մեր գիւղը, խօսակցութեան ժամանակ պատմում են, թէ ինչը զրեց իրանց՝ թուրքերին՝ թշնամաբար վարվել հայերի հետ։ Սրանցից մէկը Թանար Կադի-Մամադ-օղլին պատմում է հետևեալը. «Երեք տարի օրերց առաջ, Դանսի-Բաղարի մահմեդականներիս մէջ առաջին անգամ Օսմանլուից եկան երկու մահմեդական, (ագիտատորներ) և քարոզում էին, որ հայերին այստեղ Կովկասում սկսեցէք կոտորել, իսկ այնտեղ Օսմանլուում մենք մեր հաշիւը կը տեսնենք հայերի հետ։ Իսկ եթէ դուք չը կոտորեք հայերին, նրանք շարունակ կօգնեն Օսմանլուի ապստամբ հայերին, դարձը բարգացնելով՝ հայերը կարող են Օսմանլուում իշխանութիւն ստանալ։ Ասացին ու գնացին։ Նրանից յետոյ գալիս էին երկիր ուրիշները և նոյնը քարոզում։ Այսպէս շարունակվեց, մինչև որ Բագում առաջին անգամ եկաւ հայերի կոտորածը։ Բագում մեծ նշանչնիկը (երևի ակնարկում է Նակաշիձէին) հրաման էր տուել թուրքերին՝ հայերին կոտորելու։ Ահա մի մեծ փաստ, որ լուսաբանում է կոտորածների պատճառը, մի բան, որից խոյս են տալիս խաղաղաբար յանձնաժողովի մահմեդական անդամները, և որոնք որպէս թէ ոչինչ տեղեկութիւն չունեն, և կոտորածների սկզբնապատճառը համարում են հայկական գաղտնի կազմակերպութիւնները։

Ապագայում ծագելիք ընդհարումի առաջն առնելու համար Ղամարլու հասաւ երկու հարիւրեակից բաղկացած մի վաշ կօզակ թնդանօթներով։ Սպասվում են նորերը։

Ս. Տէր-Թովմասեան

ԲԱՂՔԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՒՍԸ

Երկուշաբթի, մարտի 13-ին, կայացաւ քաղաքային խորհրդի նիստը քաղաքագլխի պաշտօնակատար իշխ. Վ. Զերբեզովի նախագահութեամբ, որը զբաղվեց հետևեալ խնդիրներով։ 1) Հաւանաբար ապացոյց պրօգիմնազիայի համար՝ համաձայն օրէնքի և կովկասեան ուսումնական շրջանի հոգաբարձուի առաջադրութեան, հարկաւոր էր ընտրել քաղաքի կողմից ներկայացուցիչ, որը մասնակցէր մանկավարժական ժողովին և հսկէր ուսումնարանի տնտեսական մասի վրա, որի պահպանութեան համար քաղաքը յատկացրել է տարեկան 15,000 ր., իսկ գանձարանը ոչ մի կօպէկ չէ տալիս։ Զարմանալիորէն մի քանիսը իրամբ նկատում են, քանի որ ուսումնարանի գլխաւոր ծախքը քաղաքն է հոգում, քաղաքը ևս իր կողմից պէտք է ոչ թէ մէկ՝ այլ մի քանի ներկայացուցիչներ ընտրէ որպէս հոգաբարձու այդ պրօգիմնազիայի, որոնք կարող լինեն հսկել նրա ուսումնական և տնտեսական մասերի վրա և աշխատեն նրա ապագայ զարգացման և ընդարձակման մասին։ Քաղաքային խորհուրդը՝ սկզբունքով համաձայնելով այս խելացի առաջարկութեան հետ, որոշում է առայժմ մի ներկայացուցիչ ընտրել և յետոյ՝ ժամանակ ապագայում միջնորդել ուր հարկն է մի քանի հոգաբարձուներ նշանակելու մասին քաղաքի կողմից։ Առաջարկված թեկնածուներից պ. Ս. Միրզոյանը և բժ. Վարդանօվը հրաժարվում են, մնում են միայն ձայնատու Ա. Բարեանը, որը և համաձայնելով իր տուրը դնել, գաղտնի քուէարկութեամբ ընտրվում է վերոյիշեալ պաշտօնի համար։ 2) Քաղաքային հանդուցեալ բժիշկ Սարգսեանի ընտանիքին՝ քաղաքային խորհուրդը որոշում է տալ նպաստ, համաձայն քաղաքային վարչութեան կարգադրութեան և ֆինանսական յանձնաժողովի համաձայնութեան միանուագ 200 ր. 3) Քաղաքային գործերի փաստաբան Տէր-Մանասեանովը, որը վարում է այդ պաշտօնը 20 տարի՝ ներկայումս տառապում է աչքի հիւանդութեամբ, կորցրել է իր տեսողութիւնը և խնդիր է ներկայացրել բժշկութեան համար նրա-պատ յատկացնել իրան։ Քաղաքային վարչութիւնը իր կողմից՝ իր դիտումի, ի նկատի ունենալով պ. Տէր-Մանասեանի երկարամեայ ծառայութիւնը, որոշել էր միանուագ նպաստ տալ 500 ռուբլի, որի հետ և համաձայնել էր ֆինանսական յանձնաժողովը։ Քաղաքային խորհուրդը՝ մտքերի փոխանակութիւնից յետոյ գաղտնի քուէարկութեամբ վճռեց տալ միանուագ նպաստ բժշկութեան համար 500 ր. 4) Կարգացվեց քաղաքային առևտրական մասի հսկողութեան ծառայող Զմշկեանի խնդիրը, որի մէջ նա յայտնելով իր հրաժարականը ակարութեան պատճառով, խնդրում էր 12 տարվայ ծառայութեան համար կենսաթոշակի փոխարէն միանուագ նպաստ յատկացնել իրան։ Քաղաքային վարչութիւնը որոշել էր նպաստ 480 ր., որին հաւանութիւն էր տուել և Ֆինանսական յանձնաժողովը։ Քաղաքային խորհուրդը ևս գաղտնի քուէարկութեամբ հաստատեց վարչութեան վճիռը՝ յատկացնելով միանուագ 480 ր. 5) Կարգացվում է Սենտաի ուկաը, որով հաստատում է քաղաքային խորհրդի վճիռը՝ ձիտներից հասանելի տուրքը վճարելու համար ձիատէրերին որոշ ժամանակ տալու մասին։ Այդ խնդիրը արծարծվել էր 1901 թ., միայն ձիերից քաղաքը ստանում է մինչև 45,000 ր. տուրք և իր ժամանակ ձիատէրերը խնդրել էին քաղաքային խորհրդից մի քանի ամիս ժամանակով ուշացնել տուրքի վճարը. քաղաքային խորհուրդը համաձայնել էր, սակայն քաղաքային գործերի վերաբերեալ գոյութիւն ունեցող նահանգական տեսանը՝ չը համաձայնելով խորհրդի վճռի հետ—փոխել էր այդ վճիռը առարկելով՝ որ քաղաք. խորհուրդը իրաւունք չունի տուրքերի տուացումը յետաձգել և նոր նոր ժամանակներ նշանակել։ Իր կողմից քաղաքային խորհուրդը այս վճռի դէմ բողոքել էր Սենատ, իսկ վերջինս ևս իր ուկազով հաստատել էր քաղաքային խորհրդի վճիռը՝ գտնելով նրան օրինական. 6) Ինչպէս յայտնի է, Թիֆլիսում, Թուրք-հայկական ընդհարման ժամանակ, Ալիւրի մէյդանում (5-րդ քաղաքամաս) մի շարք խանութներ և մեր այրերից. քաղաքային վարչութեան մէջ հարց բարձրացաւ՝ այդ մէյդանը ընդարձակելու մաքով այրված գեհենը ձեռք բերել սեպհականատէրերից և այդ հարցով զբաղվել էր քաղաքային վարչութիւնը։ Վարչութեան անդամ պ. Ա. Խաչատեանը այդ խնդրի վերաբերութեամբ մի մանրամասն և հանգամանօրէն զեկուցումն տուեց, ներկայացնելով և այրված տեղերի յատակագիծը. այդ զեկուցումից երևաց, որ այրված տեղը ընդամենը 105 քառակուսի սաժէն է և պատկանում է 13 անձինքների, որոնցից 12-ը համաձայն են ծախել քաղաքի վրա, իսկ 13-դը, որի տեղը չնչին տարածութիւն է բռնում և պատկանում է որբերի—համաձայն չէ ծախելու։ Ցիշեալ 12 հողատէրերը 103 քառ. սաժէնի համար պահանջում են 188,800 ռուբլի կամ ուրիշ խօսքով՝ ամեն սաժէնի համար 1750 ր.։ Քաղաքային վարչութիւնը այդ 103 քառ. սաժէնից յատկապէս մէյդանն ընդարձակելու համար պէտք է գործ դնէ 6 սաժէն, իսկ մնացած տարածութեան վրա—ենթադրում է մի շարք խանութներ շինել և շահագործել մի առ ժամանակ, իսկ ապագայում, եթէ հարկ կը պահանջէ, այդ կողմն էլ մեծցնել հրապարակը և կողքի փողոցն ընդարձակելու համար։ Մաքրի երկար փոխանակութիւնից յետոյ՝ քաղաքային խորհուրդը անօգուտ գտաւ մի այդպիսի փոքր տարածութեան համար այդքան առագին գումար ծախսելը և վճռեց չը գնել այդ տեղերը. 7) Հաւաքարում, Նաթալուի մօտերքը, քաղաքը ունի մինչև 39 դեսեատին արօտավայր (ВЫГОН. ЗЕМЛЯ). անդրկովկասեան երկաթուղային վարչութիւնը իր պէտքերի համար յատկացրել է այդ գեհենը (Նաթալուղի կայարանի համար), այն ինչ մի քանի անձինք վաղուց գրաւել են այդ գեհենից որոշ տարածութիւն և ներկայումս երկաթուղային վարչութեան մէջ գրծող գնահատման մասնաժողովը արդէն որոշելով գնը՝ ուղարկել է ի հաստատութիւն Պետերբուրգ և այսպիսով ինչպէս պարզվեց, այդ մասնաւոր մարդիկ կարող են ստանալ քաղաքատական գրաւած հողերից, ի վնաս քաղաքի, բաւականին մեծ գումարներ։ Առանձնապէս երկար խօսակցութեան առարկայ դարձաւ մի ոմն Օմարաշվիլի 2½ դեսեատին քաղաքապատկան հողի գրաւումը։ Օմարաշվիլին կարողացել էր այդ գրաւած հողից 5000 սաժ. ծախել մի ուրիշի՝ Եկ. Տէր-Յակոբեանի վրա, ստանալով նախ 10-ամեայ վաղեմականութեան (ДАВНОСТЬ) հիման վրա դատարանից և ապագ նօտարից բոլոր վաւերաթղթերը. Եկ. Տէր-Յակոբեանն ևս իր կողմից ծախել է իր գնածը անդրկով. երկաթուղու վարչութեան վրա, որի գնահատման մասնաժողովը ամեն մի սաժէնի համար որոշել է վճարել 10 ռուբլի, ուրեմն քաղաքը պիտի կորցնէ միայն այդ մէկ անձի գաւթած հողի համար 50,000 ռուբլի։ Այս խնդիրը ստանալ հարցպէնդումների և տաք վիճաբանութեան առարկայ դարձաւ քաղաքային խորհրդում. մի քանիսը մեղադրում էին քաղաքային վարչութեանը, որ իր ժամանակ անփոյթ է վերաբերվել քաղաքապատկան հողերի վերաբերութեամբ և այդպիսով մեղաւոր է տուել մասնաւոր մարդկանց գրաւելու և օգտվելու քաղաքային հողերից։ Քաղաքագլուխը կարդում է այդ խնդրի մասին երկար գրաւոր-թիւն, որից իմացվում է, որ քաղաքային փաստաբանը այդ հողերը համարում է քաղաքի սեպհականութիւն և դատաստանական ճանապարհով քաղաքը կարող է իր իրաւունքները վերականգնել—պահանջելով իր վնասները երկաթուղային վարչութիւնից՝ ի դէպս, եթէ այս վերջինը կը վճարէ քաղաքի հողը գրաւողներին գնահատական մասնաժողովի որոշած գումարները. ոմանք պնդում են (իրաւասու Միրզոյանը առանձնապէս), որ այդ մասնաւոր մարդիկ առանց այլ և այլութեան կը ստանան այդ մեծ գումարները, քանի որ կարողացել են վաւերաթղթեր ձեռք բերել և օրինական ընթացք տալ գործին և նոյն իսկ աւագ նօտարն անգամ հաստատել է ուսնելու և ծախելու վերաբերեալ վաւերաթղթերը և առաջարկում էին մասնաւոր համաձայնութիւն կայացնել՝ մինչև փոդերի ստանալը՝ այդ անձանց հետ։ Մաքրի փոխանակութիւնից յետոյ, քաղաքային խորհուրդը վճռեց յանձնել քաղաքային վարչութեանը, որ նա այդ խնդրով զբաղվի անյապաղ՝ հրաւիրելով իրաւասուներից մասնագէտ-իրաւաբաններին և մտիկ ապագայում մի զեկուցումն ներկայացնել քաղաքային խորհրդին այդ խնդրի վերաբերութեամբ. 8) Կարդացվեց քաղաքային վարչութեան զեկուցումը՝ Թիֆլիսի արհեստաւորաց ուսումնարանի վերաբերութեամբ, վերականգնելու մայրենի լեզուով դասաւանդութիւնը այն կարգով, ինչ կարգով որ 1881 թ. պօլօժէնիայով կատարվում էր։ Այս խնդիրը ծագեց քաղաքային խորհրդում այն օրից, երբ կովկասեան Փոխարքան կարգադրեց տարրական ուսումնարաններում դասաւանդութիւնը կատարել մայրենի լեզուով, ինչպէս այդ Մեծ իշխան Միխայիլ Նիկոլայևիչի փոխարքայութեան ժամանակ գոյութիւն ունէր։ Քաղաքային վարչութիւնը իր կողմից նախ դիմել էր նահանգապետին այդ միջնորդութեամբ, բայց վերջինս յայտնել էր, որ այդ միջնորդութիւնը պիտի յարուցանէ քաղաքային խորհուրդը։ Մանրամասն զեկուցումը լսելուց յետոյ, որի պատճառաբանութիւնների հետ կը ծանօթացնենք ընթերցողներին առանձին՝ մտիկ համարներից մէկում—քաղաքային խորհուրդը միաձայն վճռեց—քաղաքային խորհրդի կողմից անմիջապէս, նահանգապետի միջոցով, միջնորդել Փոխարքայի առաջ՝ վերականգնելու մայրենի լեզուով առարկաների դասաւանդութիւնը Թիֆլիսի արհեստաւորաց ուսումնարանում, որ կը նշանակէ վերականգնել 1881 թւի կանոնադրութիւնը, որը այդ թւից մի քանի տարի անցնելով՝ խախտվել էր բիւրօկրատիայի ջանքերով։ Նիստը փակվեց գիշերվայ ժամի 11 և կէսին։

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Պետական Դումայի համար ընտրութիւններ են կատարվում Ռուսաստանում, կը նշանակէ՝ մեր երկիրն էլ, հարիւրաւոր տարիների ըրոնապետական բէժիմից ու սարկական կեանքից վերջապէս ազատվելով, մտնում է ժողովրդային օրէնդրութեան շրջանի մէջ. մեր բազմաչարչար ժողովուրդն էլ ուրիշ, մեզնից աւելի բաղդաւոր ժողովուրդների նման ակսում է ինքը իր ճակատագրի տէրը, իր հասարակական ու քաղաքական կեանքի տնօրինողը ու կարգադրողը լինել։ Երազ չէ՞ արդեօք սա։ Ոչ. հեռագիրները օր օրի վրա լուր են բերում և հաստատում են, որ այդ, ընտրութիւնները կատարվում են տենդային արագութեամբ, սակայն... սակայն երբ աւելի ուշադրութեամբ էք կարդում այդ հեռագիրները ու երբ զրանց կողքին կարդում էք երկրի գանազան ծայրերից ու խորքերից եկած այլ հեռագիրներն ու տեղեկութիւնները, ձեր սիրտը ճմլվում է և սկսում էք մտածում էք, թէ չէ՞ այստեղ մի ինչ որ ուրիշ բան կայ, իսկական պարլամենտական ընտրութիւնները այդ ձևով չեն լինում, նրանք այդպիսի հանդամանքների ու պարագաների տակ չեն կատարվում երբէք։ Եւ յիրաւի, ինչպէս չը յուսահատվել, ինչպէս չը թուլանալ, երբ տեսնում ես, որ մի կողմից իբր թէ հին բռնապետական բէժիմից ազատված երկիրը նոր սահմանադրական կարգերի տակ մտցնելու համար, ժողովրդային ներկայացուցիչներ են ընտրվում, իսկ միւս կողմից զուգընթացաբար շարունակվում է հին բռնապետութիւնը իր ամենատգի վայրենութեամբ։ Ինչ ընտրութիւններ են այդ, ինչ սահմանադրութիւն է, երբ ամեն օր շուրջդ կախաղաններ ու գնդակահարութիւններ են տեսնում։ Կախում ու գնդակահարում են նոյն տենդային արագութեամբ, ինչպէս որ ընտրութիւններն են կատարվում։ Կախում են համարեա թէ առանց դատի, առանց լրջամտութեան։ Կախում են և ծերերին և դեռահասներին պատանիներին, կախում են և կանանց և տղամարդոց։ Մահվան են դատապարտում շատ անգամ առանց յանցանքի, առանց լուրջ քննութեան, իսկ երբեմն էլ բողոքվին անհին մահմեդական հիման վրա։ Պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, որ միշտ անշուշտ թերի են լինում, միայն մի տարվայ ընթացքում Ռուսաստանում սպանված են 14 հազար մարդ։ Եւ ով են այդ սպանվածները։ Ինչպէս յաճախ ասում է «Բիչպ» թերթը, զրանք բոլորն էլ ժողովրդի ծաղիկներն են, նրա ամենալաւ կուլտուրական ոյժերը, որոնցով այնչափ զօրաւոր է և որոնց վրա յենվում է Ռուսաստանը։ Այդ 14 հազարը գեռ միայն սպանվածների թիւն է, իսկ քանի-քանի հազարների է հասնում բանտերում, մօտաւոր ու ցուրտ հեռաւոր աքսորավայրերում տառապողների թիւը։ Բոլոր զարգացած բանտերն ու գիւղացիները, միջնակարգ ու բարձրագոյն դպրոցների ուսանողները, ուսուցիչները, պրոֆէսորները, գրականագէտները, ինժեներները, բժիշկները, փաստաբանները, հաշտարար դատաւորները, արժանաւոր հասարակական գործիչները, մի խօսքով՝ այն ամենը, որոնք ինքնազոհ կերպով կամենում են, խրաքանչիւրը իր հասկացած ճանապարհով, ծառայել բազմաչարչար ժողովրդին, օրէնքից դուրս են յայտարարված և առանց դատի ու քննութեան, հազարներով նետվում են մութ բանտերի խորքերը և ուղարկվում են սառցապատ հիւսիսային և Սիբիրի նահանգները։ Ոչ մի բողոք հասարակութեան ու մամուլի կողմից չէ ազդում ոչ ոքի վրա և անկարելի է լինում կանգնեցնել այդ սպանդանոցը։ Բիւրոկրատիան մեծ գործի վրա է, նա նոր քաղաքական բէժիմ, սահմանադրական կարգեր է հաստատում, պարլամենտական կեանք է ստեղծում...

Խեղճ Ռուսաստան, չարատանջ ժողովուրդ։ Կարծես թէ այդ ժողովրդի ճակատագիրն է, որ քաղաքակրթութեան ամեն մի հոսանք միշտ բռնութեամբ և զէնքի ոյժով պիտի մտցնեն նրա կեանքի մէջ. քրիստոնէութիւնը մարդկերի հարուածներով տարածեցին Ռուսաստանում, նոյնպէսի բռնութեամբ ու հարձանքներով Պետրոս Մեծը մտցրեց իր եւրոպական բարենորոգութիւնները, իսկ այսօր մեր աչքի առաջ կատարվում է այդ դրամայի երրորդ գործողութիւնը, որը իր սարսափներով գերազանցում է իր նախորդներին։

Ի՞նչ է լինելու այս բոլորի վերջը, ահա մի հարց, որի առաջ կանգ է առնելու ամեն մի բարեխիղճ հասարակական գործիչ։

Ե.

ԱԿԱՄԱՑ ԲՕՅԿՕՏ

Պետերբուրգի թերթերը մի քանի մանրամասնութիւններ են հաղորդում մարտի 5-ի ընտրութիւնների մասին թէ մայրաքաղաքում և թէ գաւառներում, որ շատ ընտրող ու հետաքրքիր են։

Պետերբուրգի գործարաններից շատերի բանուորները գիտակցաբար ուղղակի հրաժարվել են ընտրութիւններին մասնակցելուց, իսկ Ատլաս գործարանում մինչև իսկ դրօշակներ են կախված եղել «կեցցէ սահմանադիր ժողովը» և «կորչի Պետական Դուման» մակագրութիւններով։ Բայց այդպէս գիտակցաբար ընտրութիւններից հրաժարվողներից դուրս եղել են և ուրիշ շատերը, որոնք, տեսնելով կառավարութեան ձեռք առած

Ցարութիւնանց (այս երկքի խնդրանօք գրեցի երեցփոխ Մ. Պապիկեանց), 9) Բաբէլ Վարդանով, 10) Պետրոս Վարդանով (այս երկուսի խնդրանօք գրեցի Ղ. Ալէքսանեան), 11) Մահեվան Մովսիսեան (խնդրանօք Մովսիսեանի՝ Մովսիսեան (խնդրանօք Մովսիսեանի՝ ստորագրեցի Ն. ք. Հերթեւցեան), 12) Արտեմ Ղազարեան Յովակիմեանց, 13) Համբարձում Նիկոյեան, 14) Գէորգ Գրիգորեան, 15) Վաղարշակ Դաւթեան, 16) Յովսէփ Յարութիւնեան (որի փոխարէն ստորագրեցի Ծառուկեան (որի փոխարէն ստորագրեցի Յովսէփեան), 17) Արսէն Յովսէփեան (երկրորդ Յովսէփեան), Վկաներ՝—1) Բուղդաշէնի ժամանակաւոր հովիւ՝ Կ. ք. Ղազարեան (անուանական կնիք), 2) Պետրոս Գէորգեան Քեալաշեանց, 3) Յարութիւն Խաչատրեան։ Վկայում եմ, որ այս մեղայականը՝ գրվեց մեզայ եկող անձանց իսկական խնդրանօք և ցանկութեամբ, որ և ստորագրում եմ՝ Բուղդաշէնի գիւղական տանուտէրի օգնական Յարութիւն Պետրոսեան։ Բայց իմ գիր չը գիտնալուս փոխարէն իմ բայց իմ գիր չը գիտնալուս փոխարէն իմ խնդրանօք ստորագրեց Պետրոս Գէորգեան Քեալաշեանցը։ Իսկականի հետ համեմատած ճիշտ է՝ Ներսէս քահ. Հերթեւցեան»։

3. Գ. Բուղդաշէնի 20 անուորների խնդիրը՝ և ընտանեկան ցուցակը՝ որ հասնում է 100 անձանց երկսեռի նկատմամբ, թէև հիւր, այնուամենայնիւ ուրախութեամբ ստացայ և բացատրված օրէնքի հիման վրա ուղարկեցինք գործադրութեան։ Եւ որքան ինձ և իմ ընկերակից յարգոյ պ. Աղէքսանդր Բէնտնուն յայտնի եղաւ՝ այս օտարոտի վարմունքի առիթը՝ է «համբայ-տնորերի» հարստահարութիւնը—եկեղորների վերաբերմամբ։ Պակաս չեն նաև գիւղական դատաւորների անխիղճ արարքը։ Գիւղական խուլ անկիւններում ոճիրներ են տեղի ունեցել և տակաւին շարունակվում են։ Հրատիրում եմ մեր կարող անձանց առանձին ուշադրութիւնը ամենայն խղճի մտօք թէ ու թիկունք դառնալու «համբա-տնուորներից» հալածված ու զրկված թշուառ գիւղացուն։ Հարուստները «օձի» լեզու ունեն և օձի հնարագիտութիւն։ Նրանք ոճիրների ստեղծողներն են ու մեղցնողները։ Քահանաների վրա երբէք յոյս մի դնէք։ Շիրակի քահանաներն ևս նեղ վիճակումն են։ Մեր յոյսը հայ-ինտելիգենցիան է և մամուլը։ Խնդրում եմ մեր պարբերական թերթերին տպագրելու բուղդաշէնցիների «Մեղայականը» ի գիտութիւն։

Նոյն Ն. քահ. Հ.

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՅԻՑ

Մարտի 6-ին

Կիրակի, ամսոյ 5-ին, քաղաքիս հասարակական ժողովարանի դահլիճում Կարապետեան ուսումնարանի հայ ուսուցիչները, տեղական մի քանի սիրողների հետ, տուին մի ներկայացում նոյն ուսումնարանի չքաւոր աշակերտների օգտին։ Խաղացին Օստրովսկու «Արդիւնաւոր պաշտօն» 5 գործ. դրամա։ Դահլիճը լիքն էր հանդիսականներով։ Խաղը ընդհանրապէս անբաւարար անցաւ։ Ղեկավարներից մի քանիսը, ինչպէս երևաց, դեռ ապրողներ էին և առաջին անգամ էին բեմ դուրս գալիս։ Ինչպէս լսում ենք, միւս կիրակի, ամսոյ 19-ին, Եղիսաբէթեան ուսումնարանի չքաւոր աշակերտուհիների օգտին նոյն ուսումնարանի ուսուցիչները և վարժուհիները տեղական մի քանի սիրողների հետ խաղալու են Սումբաթովի յայտնի «Դատաւորութիւն» դրամա։

Նոյն օրը, ս. Փրկիչ աւագ եկեղեցում, պատարագից յետոյ տեղի ունեցաւ ծխականների ընդհանուր ժողով։ Ժողովի նպատակն էր, ինչպէս արդէն յայտնել ենք, ս. Փրկիչ եկեղեցու ունեցած գումարից մի որոշ մասը յատկացնել հայ-թուրքական ընդհարումներից ՁՁաված-ներին։ Ժողովում մի քանիսները իրաւացի կերպով նկատեցին, որ մինչև այսօր նրանց յայտնի չէ թէ իրանց եկեղեցին որքան պարտատի փող ունի, որ ըստ այնմ էլ նրանից մի գումար յատկացնեն յիշեալ նպատակին, ուստի վճռեց ժողովը յետաձգել միւս կիրակի և մի հեռագրով պահանջել վիճակային կոնսիստորիայից եկեղեցու ունեցած գումարի մասին հաշիւ, և որպէս զի կարողանան գումարի մի մասը յատկացնել այդ բանին։ Ցանկալի էր, որ մեր ծխականները այդ կարօտեալներին մի զգալի գումար յատկացնեն։ Ներկայումս կարիքը մեծ է և անհրաժեշտ։

Արդէն մի քանի տարի է, որ քաղաքիս ս. Փրկիչ եկեղեցում, պատարագին, խմբապետ Պօղոս Տէր-Կարապետեանի ղեկավարութեամբ երգում էր 40 հոգուց բաղկացած քառաձայն երկսեռ խումբը, որի գոյութեան համար եկեղեցուց, ծխականների որոշմամբ, յատկացված էր 2400 ռուբլի տարեկան։ Ինչպէս յայտնի է, այժմ, Փոխարքայի տուած նոր հրամանգի համաձայն, եկեղեցու տնտեսական գործերում երեցփոխի հետ մասնակցելու են և հոգաբարձուները։ Ինչպէս լսում ենք, պ. պ. հոգաբարձուները չեն ուզում այլ ևս երգեցիկ խումբ պահելու համար փող ծախսել, ուստի առաջարկել են խմբապետ Տէր-Կարապետեանին որ եկեղեցում երգելու համար բաւականանայ միայն ուսումնարանի աշակերտներով, իսկ միացեալ վարձված երգիչներին արձակէ։

Այժմ, փառք Աստուծոյ, մեր ուսումնարանները կրկին բացվեցին և աշակերտները պարտաւորված պէտք է երգեն եկեղեցում, ուրեմն երրորդ և չորրորդ ձայների համար կը հարկաւորվեն, ինչպէս լսեցինք, միայն 12 հասակաւոր երգիչներ, որպէս զի մենք ունենանք քառաձայն խումբ։ Այնպէս որ այժմ փոխանակ 2400 ռ. ծախսելու, կը հարկաւորվի ծախսել տարեկան միայն 600—700 ռ.։ Ահա այս վերջին գումարն է, որ մեր հոգաբարձութիւնը խնայում է ծախսել եկեղեցում կանոնաւոր խումբ պահելու համար։ Ողքան խնայողութիւն եկեղեցու փողերի։

Ա. Ղազարոսեանց

ԾԱԳՈՂ ԿԻՍԱԼՈՒՄԸՆԸ

Ինձ մօտ եկաւ մի հայ ազգասէր, ասից մինչև գլուխ գնված, և հարկադրեց ինձ գրել այն, ինչ որ այժմ գրում եմ։ Նա գնված էր գրքերով, յիշատակարերով, տեղեկութիւններով, աշխարհագրական քարտէզներով, փաստերով և թւերով, իսկ որ գլխաւորն է՝ վստահութեան անսրդուելի համոզմունքով և իրերի այն պարզ ըմբռնողութեամբ, որը փայլատակում է մարդու վերջին բջջերին։

—Խնդրում եմ ձեզ, ասաց նա, լսեցէք ինձ։ Անպատճառ հարկաւոր է, որ դուք, ուսմնորդ, ինչքան էլ որ զբաղված լինէք, այնուամենայնիւ ժամանակ գտնէք մեզ լսելու։ Անպայման անհրաժեշտ է խորամուխ լինել, հակառնալ, քանի դեռ չէ կատարվել սարսափելի ու անուղղելի մի բան, որը անյոյս պիտի ողբայ Ռուսաստանը։ Դուք գրում էիք այլազգիների դաշնակցութեան, կօալիցիայի հակառակ, և նրանց թեռում դասել էիք հայերին։ Վերջին կէտում դուք սխալվեցիք։ Մենք, հայերս, հաւատում ենք ձեր ազնուութեանը, որը կը պարտաւորեցնէ ձեզ—եթէ դուք թափանցէք խնդրի էութեան մէջ—ուղղել այդ սխալը։ Հայկական հարցը չնչին բան է համեմատելով ռուսական խոշոր հարցի հետ, բայց, մանչուրակների նման, նա Ռուսաստանի համար սկսում է դառնալ եղերական մի նախերգանք...։

Որովհետև ես միշտ քարոզել եմ մեր այլազգիների վերաբերմամբ «ազնիւ յարաբերութիւններ», այսինքն, պաշտպան եմ հանդիսացել այլազգիներին, երբ նրանք արդարև կեղեքված են, և նրանց դէմ եմ եղել, երբ նրանք յարմար առիթ են որոնել վիրաւորելու Ռուսաստանին, ուստի ես պարտք համարեցի ուշադիր լսել հայ ազգասէրի ասելիքը։

—Հայերին,—սկսեց նա,—մեղադրում են սեպարատիստութեան մէջ, աւտօնոմիա պահանջելու համար։ Սակայն, բոլոր այլազգիների մէջ, ոչ միայն Կովկասեան, այլ և ուղղակի ամբողջ կայսրութեան, հայերն են միայն, որ ամենայն հաստատակամութեամբ ընդդէմ են եղել սեպարատիստութեան։ Եթէ դուք խնամքով հետևէիք մեր շարժմանը, այն ժամանակ կիմանայիք այդ։ Եթէ ռուսաց կառավարութիւնը լրջօրէն վերաբերէր նրանց, նա այդ կիմանար, չէր կարող չիմանալ։ Ցաւելով պէտք է ասել, որ ձեզանում սովորել են դասել ամենայն զեկուցումների հիման վրա, այն էլ այնպիսի անտեղեակ ու չափազանց ծոյլ մարդկանց, որոնք նեղութիւն չեն ուզեցել կրել իսկապէս տեղն ու տեղը բան իմանալու։ Հարկ չը կայ անպատճառ Կովկաս գնալ՝ համոզվելու համար, որ հայերը ամենևին աւտօնոմիա չեն պահանջում։ Դեռ շատ ժամանակ չէ անցել, երբ նոյեմբեր ամսին հէնց այստեղ, Պետերբուրգում, հայերը այլազգիների համաուսական համագումարում մերժեցին աւտօնոմիայի միտքը անգամ։ Այդ կատարվեց միայն համար չափազանց ծանր պարագաներում, լեհերի, ֆիններին, հրէաների, լատիշների, էստերի, մալօրուսների, բելօրուսների, թաթարների, վրացիների մէջ, մենք միակն էինք, որ համաձայնութիւն ունեցանք յայտնելու՝ հակառակ ենք աւտօնոմիայի։

—Ի՞նչու,զարմացայ ես։

—Որովհետև նա մեզ համար կրօսաբեր կը լինէր։ Շնորհիւ աւտօնոմիայի մենք վերջնականապէս կը կորցնէինք մեր ազգայնութիւնը։ Նայեցէք Կովկասի ազգագրական քարտէզի վրա։

Հայը բաց արից 1898 թւի «Կովկասեան օրացոյցի»-ն կցած ահագին քարտէզը։ Քարտէզը կազմել է ռուսաց կայսերական աշխարհագրական ընկերութեան անդամ Ե. Կօնդրատենկօն։

—Տեսէք, ինչ խայտաբղտութիւն է սա։ Քարտէզը քսան անգամ աւելի խայտաբղտ կը լինէր, եթէ խօսքը վերաբերէր լեզուին։ Այստեղ նշանակված են միայն կրօնքների համաձայն։ Ամբողջ հիւսիս արևմուտքը՝ կանաչ գոյն ունի, ուղղափառներն են՝ վրացիները, մինգրելցիները և այլն։ Ամբողջ արևելքը և հարաւը՝ դեղին գոյն, մուսուլմանները։ Մեկամասնը՝ (коричневый) շիաները, բաց-դեղնագոյնը՝ սիւննիները։ Ռուս ազանդաւորների, գերմանացիների, եզիդիների և հրէաների անունները վարդագոյն կղզիկներից յետոյ դուք նկատում էք խոշոր երկնագոյն բծեր, սրսկված անդրկովկասեան մուսուլմանների մութ կենտրօնում։ Կապոյտ բծերը, որ նման են մի ինչ որ ցեղի կոտրանքների ու բեկորների,—դա մենք ենք, հայերս։ Հէնց առաջին հայեացքից պարզ չէ, արդեօք, որ աւտօնոմիան մեզ համար անկարելի է։ Բաժանված չորս խոշոր և տասնեակ մանր մունր կորոների, ոչ մի նահանգում, բացի չորս գաւառներից, մենք մեծամասնութիւն չենք կազմում, այսինքն աւտօնոմիա ստանալու դէպքում ամեն տեղ էլ մենք կը գտնվէինք թուրքերի իշխանութեան ներքոյ։ Այժմ, հասկանում ք՞ը, որ մեզ համար անհամեմատ ձեռնտու է մնալ կայսերական իշխանութեան ներքոյ, քան աւտօնոմի,—աւելի ձեռնտու է ենթարկվել կուլտուրական և քրիստոնեայ կառավարութեան, քան մահմեդական։

Աւելի կարճ ասած՝—մեզ համար աւելի ձեռնտու է հաւասար իրաւունքներ ունենալ թուրքերի հետ, քան տեսնել նրանց մեզ վրա գերիշխող։ Այդ է միակ պատճառը, որ մենք, խորասուզված մուսուլմանական անգէն ծովում, դարեր շարունակ համակրանքով ենք վերաբերվել դէպի Ռուսաստանը և այժմս էլ յարգում ենք։ Ռուսաստանը ըրիստոնէութեան ամենամեծաւորը մայր երկիրն է մեզ համար։ Մենք, իսկայի մէջ խեղդվողներս, ընկանաքար վերջին այծերը լարելով թիավարում ենք դէպի Ռուսաստանը։ Ռուսաստանը մեզ սարքակցնողի դերաւոր թշնամին է, ապա ուրեմն մեր բնական դաշնակիցն է։ Այսպէս էր նա մինչև վերջին տասը տարիները, այդպէս կը լինէր և այժմ, եթէ որ չը լինէր Ռուսաստանի անօրինակ, կառավարիչ շրջանների սխալ ընթացքի շնորհիւ, անբացատրելի անվստահութիւնը դէպի մեզ...

—Բայց դուք դիմել էք, արդեօք, երբ և իցէ այդ նոյն հաւատացումներով կառավարութեանը։

—Տէր Աստուած, ինչպէս չէ. նախ քան նոյեմբերի համագումարը, դեռ մի տարի առաջ, 1905 թւի մարտ-ապրիլ ամիսներին բոլոր հայկական գաւառների ներկայացուցիչներից մի համագումար կազմվեց։ Այդ զուտ-հայկական համագումարը դեռ այն ժամանակ կարծիք յայտնեց աւտօնոմիայի հակառակ։ Միակ բանը, որ համագումարը հնարաւոր համարեց, դա կովկասեան Փոխարքային կից, կովկասեան բոլոր ազգութիւնների ներկայացուցչներից բաղկացած, մի խորհրդատու (законовѣщательный) մարմին հիմնելն էր։ Իսկ մեզ համար մենք մի բան էինք միայն ադրսում. մեր անկախ (աւտօկեֆալ) եկեղեցու իրաւունքների վերականգնումը, այսինքն, վերադարձնել եկեղեցական կալուածները և եկեղեցական-ծիսական դպրոցները։ Դպրոցներն էլ, կալուածներն էլ խլեցին մեզնից նոյնպիսի բիրտ յանդգնութեամբ և մի և նոյն անխոհեմութեամբ, ինչպէս որ այդ մի և նոյն իշխան Գոլիցինը հարկադրեց մօտ 10,000 դուխոբորներին, որոնք ընիկ վիլիկօսուներ էին, և անցեալ պատերազմի ժամանակ մեծ ծառայութիւններ էին մատուցել կառավարութեանը։ Հաւատացնում եմ ձեզ, մեր դէմ ուղղված այդ խստութիւնները խիլացի կերպով էէին մտածված, ապա թէ ոչ կարիք չէր լինի այդքան շուտ փոխելու։

Այն ժամանակվայ մեր համագումարի մշակած և Փոխարքային ներկայացրած պետիցիան ստորագրել էին բոլոր պատգամաւորները և մի քանի տասնեակ հազարաւոր, փոքր ի շատէ յարգանք վայելող հայեր։ Թւում է, որ մի այդպիսի պետիցիա կարելի է համարել ամբողջ հայ ժողովրդի ձայնը, ինչպէս էք կարծում։ Եւ եթէ այդ դօկումենտի մէջ մբռնվում է սեպարատիզմը, մի՞թէ դեռ հարկաւոր են ուրիշ ապացոյցներ։ Ասացէք, էլ ուրիշ ինչ բաներ կարելի է տալ։ Պահանջեցէք կարելի բաներ՝ մենք կը տանք։ Հայկական հանգամանքից յետոյ՝ տեղի ունեցաւ զեմստվային գործիչների Մոսկվայի համագումարը։ Հայերը այդտեղ էլ չը միացան աւտօնոմիայի պահանջներին։ Զանազան ազգութիւնների նոյեմբերեան համագումարի ժամանակ, Պետերբուրգում, մենք դարձեալ մնացինք ընդհանուր պետական հողի վրա, վիլիկօսուների հետ միասին։ Դրանից բացի ի՞նչ էք ուզում։ Ամենանդիսաւոր կերպով և անդադար մենք յայտարարում ենք մեզ կայսրութեան պլինցիպի կուսակից, պահանջելով ամբողջ Ռուսաստանի հետ միասին միմիայն Պետական Դումա և ընդհանուր բարենորոգութիւններ,—մինչդեռ դուք մեզ դնում էք մեզ սեպարատիզմի մէջ։

—Սպասեցէք, իսկ ձեր յեղափոխական կոմիտեները։ Համաձայկական պրօպագանդները Թիւրքիայում։ Դրամական ժողովարարութիւնները, առանց կանգ առնելու քաղաքական սպանութիւնների առաջ,—հարցրի ես։

—Այո, այո։ Այդ բոլորը ճշմարիտ է։ Բայց չէ կարող և չը լինել, երբ Ռուսաստանը դաւանանց մեզ և ձգեց թիւրքական դանակի տակ։ Մի մեղադրեք խիստ խօսքերիս համար. ոչ թէ մենք դաւանանցինք Ռուսաստանին, այլ նա մեզ։ Ահա դրա մէջն է կայանում մեր ազգի անծայր ողբերգութիւնը և ձեզ համար մեծ դժբախտութիւնների աղբիւրը։ Մտէք ի սէր Աստուծոյ մեր դրութեան մէջ, դէթ մի րոպէ երևակայեցէք մեր այն արհաւիրքները, որոնցով մենք շրջապատված ենք։ Հեշտ բան է ձեզ, 130 միլիոնից բաղկացած մի ազգի համար, երկիւղ չը կրել «ինչ որ Թուրքերից», ինչ որ անդրկովկասեան թուրքերից, բայց երևակայեցէք ձեզ սի քրիստոնեայ ազգ, որ բաղկանում է ընդամենը 1,200,000 հոգուց, ցան ու ցիր ընկած կոտրեալով կիսավայրենի և քրիստոնէութեան դէմ գրգռված մահմեդականների անհամար մասսայի մէջ, որոնք դեռ քիչ ժամանակ առաջ հայութեան սարկացնողները և պատմական մահացու թշնամիներն են եղել։ Մենք մեր պատմութեան ամբողջ երկու ու կէս հազար տարվայ ընթացքում կրել ենք տասնեակ տիրապետութիւններ և կոտորածներ, և առայժմ, այս օրերում, երբ մենք զրուցում ենք ձեզ հետ միասին, հարց է բարձրանում նոր արշաւանքների մասին և գուցէ վերջին կոտորածներին... Ի՞նչ է նշանակում ապա Կովկասում կատարվող կոտորածը այս ամբողջ տարի։ Նա լուրջ պատերազմի սկիզբն է միայն, որը—ուզում էք թէ ոչ—պէտք է դուք տվէք Մերձաւոր Արևելքում։ Բոլոր նշաններից երևում է, որ ձեզ համար այդտեղ պատրաստվում է մի հարուած նոյնքան անսպասելի և թեր ևս այնպէս էլ ծանր հետևանքներով, ինչպէս որ եղաւ Հեռաւոր Արևելքում...

«Ուշադրութիւն դարձրեք մի շատ կարևոր, բայց Ռուսաստանի կողմից մոռացութեան տրված, փաստի վրա։ Թիւրքիայի և Պարսկաստանի դէմ մղած ձեր բոլոր պատերազմների ժամանակ, մենք, հայերս, Ռուսաստանի համար ներկայացնում ենք քրիստոնէութեան ամենավերջին նախապահակը հարաւում։ Մենք արիացիներ և քրիստոնեաներ ենք այնպէս, ինչպէս որ դուք, և 1600 տարի շարունակ պատուար ենք եղել քրիստոնէութեան համար նրան թշնամի տարրերի դէմ՝ պարսիկների, արաբների և վերջապէս մոնղօլների։ Ասացեք խնդրեմ՝ բազմամիլիոն, նուաճումներ կատարող ու յաղթական քրիստոնէութեան մէջ կայ արդեօք, մի ուրիշ աւելի չարաբաստիկ, նահատակ ազգ քան հայն է։ Քրիստոսի անունի համար մենք զոհվել և զոհում ենք մինչև այժմ էլ, մեզ համար դեռ ևս խպառ չէ վերջացել կռապաշտութեան հալածանքների և սարսափելի կեղեքումների դարերը։ Եւ ահա ամենաղօր քրիստոնեայ ազգութիւնները մոռացութեան են տուել մեզ։ Նրանք այդ երզորները, մոնղոլական երեք հեղեղներ յետ մղողները մոռացել են մեր մասին և այժմ թոյլ են տալիս մեզ նահատակվելու մոնղոլական սրի տակ։ Եւ որ ամենասարսափելի է՝ քրիստոնէութեան մէջ մեզ ամենամերձաւոր, համարեա հաւատակից Ռուսաստանը դաւանեց մեզ... Դուք կառարկէք, որ Ռուսաստանը պարտաւոր չէ փրկել արևելեան քրիստոնեաներին։ Սակայն մենք, յիսարներս, դժբախտներս ուրիշ կերպ ենք մտածում։ Հզորությունն է պարտաւորեցնում։ Բաղդաւորութիւնն է պարտաւորեցնում։ Ի՞նչպէս կարելի է, որ հսկայ ու հզօր եղբայրը, այն էլ քրիստոնեայ—պաշտպան չը կանգնի իր պզտիկ եղբօրը, երբ նրան մորթում են։ Ռուսաստանին պարտաւորեցնում էր նրա վրա գրված մեր վարդապետ յոյսերը, նրա համար վերառաքված ջերմ աղօթքները մեր եկեղեցիներում, մասամբ էլ պարտաւորեցնում էր տաճկական պատերազմների մէջ հայերի թափած արիւնը, այնպիսի հայերի անունները, ինչպէս իշխան Արղութեան-Երզնկացաբազուկ, իշխ. Մադաթեան, Բեհբուդեան, Լազրեվ, Լօրիս-Մելիքեան, Տէր-Ղուկասեան, Շեղիօնիկով և այլն։ Մի՞թէ այդ հայերը ոչ մի նկատելի ծառայութիւն չեն մատուցել Ռուսաստանին։ Արդ հէնց այդ դարաւոր տանջանքները, ակնկալութիւններն ու արիւնը, թւում է մեզ որ պարտաւորեցնում են Ռուսաստանին, եթէ նոյն իսկ ոչինչ համարենք առողջ դատողութիւնը, որ պարտաւորեցնում է օգնել դաշնակցին։ Մինչև Ալէքսանդր երկրորդի մեռնելը Ռուսաստանը մեզ ձեռքից չէր թողնում, պահպանում էր։ Բայց յետոյ հիւսիսի սառնութիւն փչեց մեզ վրա։ Այնպիսի ճոխութեամբ մեզ խոսացված Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածով բարենորոգումները երբէք չիրագործվեցին, մինչդեռ նրանց համար երաշխաւորել էին բոլոր մեծ պետութիւնները։ Ուրեմն էլ ի՞նչ արժէք ունի պետութիւնների խօսքը։ Մի մոռանաք, որ մենք հնագոյն ազգերից մէկն ենք, Հռոմի և Բաբելոնի ժամանակակից,—մենք չենք կարող թոյլ տալ, որ մոռթեն մեզ անասունների պէս, առանց հերոսական բոզոքի և անօրինակ կռի։ Երբ ամբողջ քրիստոնէութիւնը յուսախաբ արեց մեզ և բարի Ռուսաստանը յետ քաշեց օգնութեան համար մեկնած իր ձեռքը, այն ժամանակ էլ ի՞նչ էր մընում մեզ անել, եթէ ոչ սպառազինվել։ Մի՞թէ յանցանք է, երբ մարդիկ պաշտպանում են իրանց կեանքը ասպակի դէմ։ Եւ թիւրքիայում մենք ամբողջապէս ենթակայ ենք ամենանգութ գազանային ասպակութեան։ Այդ պատճառով առաջ եկան յեղափոխական կոմիտեները։ Մեր երիտասարդ սերունդը, որ կրթվել էր կուլտուրական երկիրներում, բանկոց յուզվեց։ Սկսեցին միջոցներ հաւաքել կռուելու համար։ Բայց ի՞նչպիսի կռի համար։ Ոչ թէ նրա համար, որպէս զի անջատվեն Թիւրքիայից կամ ձեռնից,—ճ, ոչ, Թիւրքիայում մենք բաժան բաժան ու ցրված ենք վեց վիլայէթներում աւելի ևս, քան Անդրկովկասում, և տակտային համեմատութիւնը աւելի ևս աննպաստ է մեզ համար։ Մինչև իսկ Թիւրքիայում էլ մենք չենք ցանկանում աւտօնոմիա, այլ մարդկային ենրաչխաւորված իրաւական գոյութիւն։ Մեր ազգակներն ու հեռնծանները դրա առիթով յեղափոխութիւն համարցին։ Դաշնագրով ճանաչված իրաւունքը Թիւրքիան բռնում, խռովութիւն համարեց, իսկ Ռուսաստանը հաւատ ընծայեց դրան։ Կար մի վայրկեան՝ ընդամենը սրանից 12 տարի առաջ, երբ Ռուսաստանը կարող էր փառաւոր դեր խաղալ Մերձաւոր Արևելքում, երբ Անգլիան ինքն էր առաջարկում Ռուսաստանին Հայաստանը, երբ մեծաշոգի լինելով Ռուսաստանը առանց պատերազմի կարող էր ազատել գերութիւնից կայանաւոր-ազգերից ամենավերջինը և միաժամանակ ամրապնդել իր դիրքը Ասիայում։ Ցիր Լօբանով-Ռոստովսկին կորցրեց այդ վայրկեանը։ Մինչդեռ այն ժամանակ 12 տարի առաջ դուք Բերլինի դաշնագիրը բարեշրջէք (корректировать) ձեր օգտին, տեղի չէր ունենալ գերմանացիների խաղաղ նուաճումները Ասորեստանում, չէր լինի, գուցէ, և Հեռաւոր Արևելքի ավանտիւրան, որ ստեղծել էին գերմանացիները ձեր ուշադրութիւնը Թիւրքիայից հեռացնելու համար։ Եւ ահա, կարծես իբրև հատուցում ձեր յանցաւոր վարմունքի, դուք հրաժարվելով Հայաստանից՝ կորցրիք նրան տիրապետելու ամբողջ ձեռնտու պայմանները և ժառանգութիւն ստացաք միասակար հետևանքները։ Հայկական արիւնոտ մղձաւանջը փոխադրվեց մեզ մօտ, Անդրկովկաս, որտեղ կատարվում է կոտորածը աւելի բացարձակ քան Թիւրքիայում։ Դա դեռ բաւական չէ, սկսվում է արդէն իսկ և իսկ այն պատերազմը, որից դուք այն ժամանակ երկիւղ էիք կրում և որը այն ժամանակ չէր էլ լինի, և որը այժմ համարեա անխուսափելի է...

—Ի՞նչ պատերազմ է, ի՞նչ բանի մասին էք խօսում։

—Պատերազմը Թիւրքիայի հետ։ Ճշմարիտ, կարելի է կարծել, որ դուք Պետերբուրգում ուղղակի հմայված էք։ Եաղօնական անեղ հարուածը կարծես խլել է ձեր գիտակցութիւնը։ Սթափվեցէք, վեր կացէք քնից! գիտէք, արդեօք, ինչ պատրաստութիւն է տեսնվում Թիւրքիայում։ Դաղղ Արևի ծոնգոլների ձեռքով ջարդված ու վարկաբեկ եղած, դուք այժմ կանգնած էք Կիսալունի մոնգոլների ճակատամարտի նախօրեակի առջև, և փոխանակ օգնութիւն ցոյց տալու Կովկասից դուրս եղած ձեր միակ քրիստոնեայ դաշնակցին, ձեր բնական առաջնամարտիկ, առանգարա Հայաստանին, դուք մատնում էք նրան թուրքերի աւերածին ու սրածութեան!

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բոստոն, 26 փետրվարի

Զեռնարկելով Բոստոնում գեղարուեստական մի հաւաքածուի հրատարակութեան «Կովկաս» վերնագրով, բազմաթիւ շքեղ, գունաւոր պատկերներով՝ խնդրում ենք ձեզ չը դադաղ ձեր աջակցությունը որ և է ձեզ մատչելի միջոցներով։

Մեր հաւաքածուի ընդհանուր ծրագիրն ընդգրկելու է.

1. Բանաստեղծութիւններ.
2. Էջերիներ, պատկերներ, նորավէպեր.
3. Հայկական հարցը Կովկասում և Տաճկահայաստանում.
4. Կովկասեան կոտորածներ.
5. Գեղարուեստական մասի մէջ մտնելու են պատկերներ և տեսարաններ, հայկական և գլխաւորապէս կովկասեան կեանքից են, և։

Այս հաւաքածուն լոյս է տեսնելու մայիսին և ուստի խնդրում ենք ձեզ, բարեհաճեք հաստատել ձեր օժանդակութիւնը մեր ձեռնարկութեան առ աւելի բան օրվան մէջ ներկայ դիմումը ընդունելուց յետոյ։

Հարկաւոր ենք համարում յայտնել, որ հաւաքածուի ողջարդիւնքը յատկացվելու է կովկասեան ազգութիւնից ՁՁաված հայ ազգաբնակութեան, պ. Մելիք-Ադարեանցի միջոցով։ Աշխատակցելու են մի քանի ականաւոր հայասէր ամիրեկցիներ։

Յուսալով՝ որ մերժելու չէք մեր խնդիրը, յայտնում ենք կանխապէս մեր հրճուանքը ձեր մասնակցութեան և ընդհակացութեան համար։

Մեր հասցէն՝ Alexander Melik, «Ararat» Publ. Co. P. O. Box 4, Chelsea. Mass. Etats Unis. Ի դիմաց Ցանձնախմբի՝

Ալեքս. Մելիք

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վեհափառ Կաթողիկոսը տեղեկանալով, որ կովկասեան կոյրերի խնամակալութիւնը, միջոցների սղութեան պատճառով, դժուարանում է պահպանել կոյրերի ուսումնարանը և Թիֆլիսի ակնարուժարանը, ուղարկեց 1000 ռ. խնամակալութեանը նպաստ։ Միևնոյն ժամանակ ցանկութիւն յայտնեց խնամակալութեան անդամ լինելու։

—

Թիֆլիսի նահանգապետը բացատրել է 1) գիւղական շրջանային ժողովների համար ընտրութիւններ կատարելը ամեն մի գիւղում առանձին կամ մի քանի գիւղերից հաւաքած ժողովում պէտք է վերապահել գիւղացիների իրանց կամքին։ Ոստիկանական պաշտօնեաների մասնակցութիւնը յիշեալ ժողովներում թոյլատրելի չէ, որովհետև նրանք պարտաւոր են հեռու մնալ ընտրութիւններից ու չաղդել նրանց ելքի վրա։ Այդ կողմից ոստիկանական պաշտօնեաների վրա պարզ կայ արված, որ նրանք միայն հսկեն, որպէսզի ընտրողական իրաւունք չունեցողները ներկայ չը լինեն ընտրութիւնների ժամանակ։ 2) Ընտրողական ցուցակները պատրաստվելուց յետոյ, համաձայն 1905 թւի դեկտեմբերի 11-ի հրովարտակի, պէտք է յայտարարել ժողովրդին և անմիջապէս զեկուցանել նահանգապետին թէ ո՞ր օրն է յայտարարված։ Ընտրողական և նախնական ժողովները, նոյնպէս և շրջանային գիւղական ժողովներին լիազօրական ընտրութիւնների օրը նշանակվում են նահանգապետի կողմից։

—

Աչքի առաջ ունենալով օտար երկրացիների կորուստների վարձատրութեան համար յաբուցված հարցը անդրկովկասեան վերջին անկարգութիւնների պատճառով, Փոխարքայի հրամանով հաղորդվում է կովկասեան երկրի բոլոր ժամանակաւոր գեներալ-նահանգապետներին, որ օտար-հպատակների վերաբերմամբ էլ պէտք է զեկավարվեն մեր օրէնքների համաձայն և վնասը ստանան յանցաւորներից։ Ուստի ՁՁաված օտար-երկրացիները կարող են դատ սկսել ու պահանջ անել առանձին պաշտօնեաներից, որոնք մեղաւոր են անկարգութիւնները ճնշելու համար միջոցներ ձեռք չառնելու պատճառով։ Այնպէս որ կառավարութիւնը չէ կարող երաշխաւորել օտարահպատակների կրած ՁՁաների համար։ Վարչական անձինք և հասատաութիւնները պարտաւոր են բոլոր օտարահպատակներին ամեն տեսակ աջակցութիւն ցոյց տալ յանցաւորներից իրանց ՁՁաները ստանալու համար։ (Պ. Հ. Գ.)

—

Ինչպէս հաղորդում է «Ռ. Հ. Գ.», կոմս Վորոնցով-Դաշկովը մայիսին Պետերբուրգ է գնալու կովկասեան երկրի կառավարութեան վերաբերեալ մի քանի կարևոր հարցերի մասին անձամբ զեկուցանելու։

—

Մարտի 4-ին, Պետերբուրգում, ազնուականների ժողովարանի դահլիճում կայացաւ կրթական լիգայի հիմնական ժողովը, որին նախագահում էր պրօֆէսօր Կիրպիչնի։ Ճառեր արտասանեցին պրօֆէսօր Կարէյէվը և Կօվալեվսկին, զեկուցանում էր Ֆայլբօրգը։ Բացուի նախկին քաքաքագլուխ Ա. Ի. Նօվիկօվը առաջարկեց մանվան պատիժը վերացնելու բէզօլիւցիան, ժողովը ընդունեց այդ առաջարկութիւնը բուռն ծափահարութիւններով և որոտագին գոչերով, «Թող կորչի մանվան պատիժը»։ Այդ ժամանակ բեմ է դուրս գալիս ոստիկանապետը։ Ամոլուկը և ծափահարութիւնները սաստկանում են և տևում մի քանի րոպէ։ Ոստիկանապետը ինչ որ խօսում է նախագահի հետ։ Հասարակութեան մէջից լսվում են ձայներ. «կարդացէք բէզօլիւցիան»։ Նախագահը հարցնում է ժողովին՝ հաստատում է նոյ արդեօք, լիգայի կանոնադրութիւնը և ժամանակաւոր վարչութիւնը, ժողովը վաւեր է համարում։ Ոստիկանապետը բարձրանում նախագահը։ Ամենայն դէպքում նա դիմը արտահանութեան կենտրոններում։ Բայց այս օրինական և գործնական ճանապարհը, տարաբաղդաբար, զանցառութեան է տալիս քաղաքային վարչութիւնը, որի պատճառով իրականութեան մէջ ստեղծվում են անկանոնութիւններ։ Օրինակ, ներկայումս, Օդեսայից եկած ճիշտ տեղեկութիւնների հիման վրա, ալիւրի գինը զգալի կերպով պակասել է այնտեղ, այնպէս որ՝ գնորի պակասը զգալի կերպով ծանրացել է ոչ միայն ալիւր վաճառողների վրա, այլ և այն բանկերի, որոնք ապրանքների, հիմնական և ալիւրի գրաւականով սովորականից աւելի փողեր են փոխ տուել։ Այն ինչ մեր քաղաքում, երբ ալիւրը իր արտահանութեան կենտրոններում աւելի բարձր գին ունէր և երկաթուղային գործադուլները ևս որոշ չափով դժուարացնում էին ալիւրի ներմուծութիւնը—հացի գինը 1/2 կօպէկ պակաս էր այժմեան սակագնից, ուրեմն հիմա պէտք է շատ աւելի պակաս լինի, բայց հակառակն ենք նկատում։ Այս անկանոնութեան պատճառը այն է, որ քաղաքային վարչութիւնը սակագին նշանակելիս ի նկատի չէ առնում բոլոր հանգամանքները, հարկաւոր և ճշգրիտ տեղեկութիւններ չէ հաւաքում հաւատի աղբիւրներից, չէ հրավիրում գործին տեղեակ

«Русь»-ը հաղորդում է, որ Հելսինգֆորսում նոր տեղեկութիւն է ստացվել, որ Պետերբուրգից անցեալ շաբաթ պէտք է չորս գնացք ճանապարվէր Ֆինլանդիա զօրքերով, նրանցից երկուսը պէտք է ուղարկվի Հելսինգֆորս, իսկ միւս երկուսը՝ Աբո։

—

«Рус. Газ.»-ին հաղորդում են որ Սև ծովի նաւատորմի ամենամեծ նաւերի վրա սաստիկ յուզմունքներ է տիրում։ Որպէս զի կազմ ու պատրաստ լինեն կռուի համար, նաւաստիները հրաժարվեցին թնդանօթների մասերը յանձնել։ «Потемкинъ» նաւի վրա նաւաստիները հրաժարվեցին ցամաք գնալ, որտեղ, ինչպէս կարծում էին, պէտք է նրանց կալանաւորէին։ Մի և նոյն ժամանակ նրանք թոյլ չը տուին իրանց սպաներին նոյնպէս հեռանալ նաւերից։ Ցամաքի վրա գտնվող նաւաստիների և զինուորների մէջ սաստիկ թշնամութիւն կայ, իսկ կօզակների մասին աւելորդ է անգամ ասել։ Այնտեղ թէև նրանցից շատ քիչ մարդ կայ։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրի կարգադրութեամբ, ինչպէս հաղորդում է «Рус. Газ.» թերթը, մինիստրութեան արական միջնակարգ բոլոր դպրոցներում պարապմունքները պէտք է վերջանան Զատկի տօներից առաջ և աւարտման քննութիւնները կը սկսվեն Զատկից յետոյ։

—

Ռուսաց թեմական շրջանային խորհուրդը վերջացրել է եկեղեցական-ծխական դպրոցների 1904 և 1907 թվի հաշիւների կազմելը։ Այդ հաշիւներից ի միջի այլոց, իմանում ենք, որ այդ դպրոցները պահելու համար ծախսված է ընդամենը 417,302 ռուբլի, ի թիւն որոց ուղղափառ Սինոդի կրթական խորհրդի յատկացրած 267 հազար ռուբլին, իսկ մնացած գումարը գոյացել և ծախսվել է եկեղեցական միջոցներից, նպաստներից և այլն։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԳԵՐՄԱՆԻԱ

Նոր մինիստրութեան յայտարարութիւնը։ Մարտի 1-ին ֆրանսիական նոր մինիստրութիւնը, որ ստացել է «մեծ մինիստրութեան» անունը, առաջին անգամ ներկայացաւ պարլամենտին և ներկայացրեց իր ծրագիրը—յայտարարութիւնը։ Այդ ծրագրի մէջ շօշափված են եկեղեցական գործերի ցուցակագրութեան, պաշտօնեաների սինդիկատներ կազմելու իրաւունքի, ինչպէս և արտաքին քաղաքականութեան խնդիրները։ Մինիստր Բարթու յայտնեց, որ պաշտօնեաներին, սենդիկատներ և գործադուլներ կազմելու պաշտօնական իրաւունքը չը պէտք է տալ։ Սակայն Բրիանը հակառակ կարծիքի էր։ Միջազգային խնդիրների վերաբերմամբ Գլեմանսոն վճռականապէս խօսեց ի նպաստս սերտ մերձեցման Անգլիայի հետ և արտաքին գործերի մինիստր Բուրժուան պաշտպանեց։

Մինիստրութեան յայտարարութիւնը լիակատար հաւանութեան արժանացաւ արմատական մամուլի կողմից։ Արմատական-սոցիալիստական և սոցիալիստական մամուլը աւելի զսպված վերաբերվեց։ «Lonterne» թերթը գրում է. «Երկիրը կարող է ապաստէն շնչել և նորից վստահաբար վերաբերվել ապագային։ Այժմ իշխանութեան գլխին կանգնած են հանրապետականները։ Մենք նրանց կը տեսնենք գործում և գործերի համաձայն էլ կը դատենք»։ Ժօրէսը իր «Humanite», թերթի մէջ գրում է. «Փորձութիւնը վերջացաւ աւելի լաւ, քան մենք յոյս ունէինք։ Ոչ թէ նրա համար, որ մինիստրական յայտարարութիւնը բոլորովին գոհացուցիչ էր. ոչ։ Օրինակ, կառավարութիւնը քաջութիւն չունեցաւ ուղղակի ընդունել պաշտօնեաների սենդիկատների օրինաւորութիւնը։ Բայց Սարբիէնը խոստացել է «status quo», իսկ այդ բէժիմի ժամանակ պաշտօնեաների սենդիկատները չեն ենթարկվի հալածանքների»։

Աշխատական օրգանները յայտի թշնամութեամբ են վերաբերվում մինիստրութեան յայտարարութեան, իսկ նացիոնալիստական մամուլը անհանում է Սարբիէնի մինիստրութիւնը առելութեան, հալածանքի և բռնութեան մինիստրութիւն կաթոլիկների վերաբերմամբ։ «Gaubois» գրում է. «Մենք ոչ մի իլլուզիաներ չունենք, կաբինետը կը գնայ մինչև վերջը և նրա պատմութիւնը երկու խօսքով կարտայայտվի—յեղափոխութիւն և ներքին կռիւ»։

ԹՈՒՐՔԻԱ

Եմենի ապստամբութիւնը։—«Times»-ի մասնաւոր թղթակիցը Կ. Պօլսից հեռագրում է մարտի 14-ին։ Միանգամայն վստահելի աղբիւրից ստացված տեղեկութիւնները շատ վատ գոյներով են նկարագրում Ահմէդ Ֆէյզի փաշայի դրութիւնը Եմէնում։ Ֆէյզի փաշան իր 10,000 զօրքով՝ քանի քանի անգամ փորձել է ազատվել ապստամբների պաշարման գծից, բայց ի զուր. ստիպվել է նահանջել և փակված մնալ Սանաայում, որովհետև փոխադրութեան միջոցների թերութեան պատճառով բոլորովին անկարելի է լինում պաշար և ռազմամթերք հասցնել նրան։ Ֆէյզի փաշա, իր դրութիւնից յուսահատված՝ հրաժարական է տուել և խնդրել սուլթանից, որ հրամայատարութեան պաշտօնը յանձնվի մի երիտասարդ զինուորականի։ Հրաժարականը չէ ընդունված։ Կառավարութիւնը անում է հնարաւորը Ֆէյզի փաշային պաշար, ռազմամթերք և զինուոր ուղարկելու համար, բայց փողի պակասութեան, զինուորների դժկամակութիւնը ծառայելու Եէմէնում, այրող կլիմայի տակ, և թիւրք ադմինիստրացիայի անգործնականութիւնը ապարդիւն են դարձնում կառավարութեան բոլոր ջանքերը։ Դժուար է Կ. Պօլսից ճիշտ տեղեկութիւններ ստանալ Եմէնի գործերի մասին, բայց դատելով իմ լսածներից՝ դրութիւնը օրեց օր աւելի վատթարանում է քան բարւոքվում։

Թիւրքիան եւ Միացեալ-Նահանգները։ Թիւրքիայի յարաբերութիւնները Միացեալ-Նահանգների հետ հետզհետէ լարվում են։ Կ. Պօլսի ամերիկեան դեսպանատունը այս տարվայ փետրվարի 19-ին մի ծանուցագիր ուղղեցրել Բ. Դռան յիշեցրեց այն պահանջները, որ Սպիտակ Տունը (Ամերիկայի արտաքին գործերի մինիստրութիւնը) 1903 թ. փետրվարի 25-ի նօտայով արել էր Թիւրքիայի մէջ գտնվող ամերիկեան վարժարանների և միսիոնարութիւնների նկատմամբ, և թիւրքայ կառավարութիւնն ևս խոստացել էր կատարել։ Սակայն սուլթանը իր սովորութեան համաձայն, չը կատարեց իր խոստումը և ոչ մի գոհացումն չը տուեց Ամերիկային։

Որովհետև Բ. Դուռը չը պատասխանեց փետրվարի 19-ի պահանջագրին, դեսպան Լեյշմանը յայտնեց նրան, թէ Միջերկրականի մէջ գտնվող ամերիկական նաւախմբին հրաման է տրված այցելել օսմանեան ջրերը, սկսած Բէյրութից մինչև Բէկիքա—Դարդանելի նեղուցը։ Ցայտագիրը թէև արտաքին քաղաքավարական ձևերով է գրված, բայց էապէս սպառնալիքներ է պարունակում։

Թիւրքիայի զինավորումը։ Կ. Պօլսից գրում են «Սօֆիայի Կուրիէր» լրագրին, որ սուլթանը մի իրադէպով հրամայել է զինուորական մինիստրին զէնքի կանչել մի քանի զօրախմբեր, հոգ տանել պրօվիանտ պատրաստելու, Մախսուսիէ ընկերութեան փոխադրական նաւերը ուղղելու, զօրքերին ռազմամթերք հայթայթելու մասին։ Ամենքին սաստկակ զարդեցնում է այն հարցը, թէ ում դէմ են ուղղված այդ պատրաստութիւնները և որտեղից թիւրքայ կառավարութիւնը միջոցներ է գտել պատերազմական պատրաստութիւնների համար։ Ցայսմանէ է միայն այն, որ «գերմանական արեւելեան բանկը» նորերս 500,000 լիրա փոխ է տուել, բայց, ի հարկէ, այդ գումարը չի ծածկի ծախքերը։ Ասում են, որ սուլթանը դրել է գերմանական մինիստրութեան տրամադրութեան ներքոյ իր անձնական հարստութեան մի մասը, որ անգամ է։

ԳԵՐՄԱՆԻԱ

Վիլհելմ կայսրը եւ խլամուրթիւնը։ Մարտի 2-ին, բարլամանտի մէջ Բեբել մի ճառ արտասանեց, որի մէջ ակնարկելով կայսրին, ասաց թէ վերջինս բաղձանք ունի, որ իրան համարեն պաշտպան Իսլամի և հոմանաւորող բոլոր մուսուլմանների։ Կայսրի ուղևորութիւնները՝ Պոլիս, Երուսաղէմ և Մարոկկոյի մէջ միայն մի նպատակ ունէին՝ համոզումն առաջ բերել թէ Վիլհելմ կայսրը ծառայում է համիսլամական հարցին։ Բոլոր աշխարհը հաստատում է, թէ Գերմանիայի կայսրը Իսլամութեան գրօշակը բարձր է բռնել։

—Կանանց հարցը Բելգիայում։ Ինչպէս յայտնի է, կանանց իրաւագիտական դրութիւնը Գերմանիայում սաստիկ անգոհացուցիչ է։ Ազատ մտածողների ֆրակցիայի կողմից բէյխստագին ներկայացրվեց մի օրինագիծ ոչնչացնելու համար այն սահմանափակումները, որոնք գոյութիւն ունեն գերմանական շատ պետութիւնների մէջ կանանց՝ ժողովներին մասնակցելու վերաբերմամբ։ Օրինագիծը պաշտպանող պատգամաւորը, Պաշնիկէ ցոյց տուեց, որ քաղաքական կեանքի մէջ գերմանական օրէնքը հաւասարեցնում է կանանց, երեխաներին, աշակերտներին և քաղաքացիական իրաւունքներից զրկվածներին։ Միլիոնաւոր կանայք անկախ ծառը աշխատութեամբ արդիւնաբերութեան զանազան շրջաններում մի կտոր հաց են վաստակում և զրկված են տարրական հասարակական իրաւունքներից. պէտք է ընդհանուր օրէնդրութեան միջոցով հեռացնել գոնէ ամենամեծ սահմանափակումները։

Նացիոնալ-ազատամիտները քննեցին յօգուտ օրինագծի, յայտնելով հանդերձ, որ կանանց իրաւունքների հաւասարութեան հարցում արմատական պահանջներ չը պէտք է անել. այս վերջին յայտարարութիւնը սպառիկ բողոք առաջ բերեց սոցիալ-դեմօկրատների կողմից։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

13 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 մարտի։ Ներքին գործերի մինիստրը թոյլատրեց Պետերբուրգի գաւառին երկրորդ անգամ կատարել ընտրութիւններ, որովհետև առաջին անգամ չէր աջողվել ընտրել լիազօր։

ԽԱՐԿՈՎ, 13 մարտի։ Լեռնահանքատէրերի համաժողովը որոշեց դադարեցնել իր պարապմունքները մինչև մարտի 25-ը, որովհետև անդամների մեծ մասը մեկնում է ընտրութիւններին մասնակցելու համար։

ՋՈՒԳԴԻԴԻ, 13 մարտի։ Տեղ ժամանեց գեներալ-նահանգապետ Ալիխանովը մի հարիւրակ դրագուններով։ Քաղաքը դիմաւորից հանդիսաւոր կերպով, խնդրեց գեներալին Նորին Կայսերազան Մեծութեան առ ոտս արկանել իրա ամենահպատակ զգացմունքները և միջնորդել՝ նշանակելու Զուգդիդում մի կանոնաւոր զումարտակ։

14 մարտի

ՆԻԿՕԼԱԷՎ, 13 մարտի։ Զը նայած ագիտացիային և ընդդիմադրութեան, բանուորների լիազօրների ընտրութիւնները ամենուրեք հանդիսաւ անցան։ Ընտրվածները պատկանում են չափաւոր և ազատամիտ ուղղութիւններին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 մարտի։ Բօրսային կօմիտէը հաղորդում է իր գիտութիւն ընտրիչների համաժողովի, որ առևտրից և արդիւնաբերութիւնից Պետական Խորհրդի անդամների ընտրութիւնը նշանակված է Պետերբուրգի ընդհանուր բօրսայում, մարտի 16-ին ցերեկվայ ժամի 2-ին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 մարտի։ Կոմս Իգնատիէվի մամլաժողովի նիստը մարտի 14-ին նուիրված է լինելու բացասական օրէնդրութիւնների հարցին։ Նիստերը վերջանալու են ոստիկանական հսկողութեան և խաղաղ ժամանակ վարչութեան ունենալիք իրաւունքների նախագծի քննութեամբ։ — Հրատարակված է Սինոդին առած մի ուկազ, որ որոշում է Պետական Խորհրդի հոգևորական անդամների ընտրութիւնների կանոնները։

ԿՐՈՆՇՏԱԴ, 13 մարտի։ Զինուորա-ծովային դատարանում շարունակվում են պաշտպանների ճառերը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 մարտի։ Բարձր կրթական հաստատութիւնների պրոֆէսոր պատգամաւորների համաժողովի վերջին նիստում ժողովրդական լուսաւորութեան մինիստրը ճառ արտասանեց, որի մէջ նկատեց, որ կրթական հաստատութիւնների բարենորոգման առթիւ եղած բոլոր նախկին համագումարները բաղկացած են եղել սոսկ մինիստրութեան նշանակած անձերից, որոնք բնականօրէն արտայայտիչ են եղել հէնց իրա մինիստրութեան հայեացքներից, որ պարզ է որ այդ հայեացքները կեանքի իսկական ձայն չեն համարվի։ Բարձր կրթական հաստատութիւնների ազատ ընտրված ներկայացուցիչների աշխատանքը ինքն ըստ ինքեան այնքան լուրջ է հանդիսանում, որ կառավարութիւնը պարտաւոր է հաշուի առնել նրան։ Պատգամաւորները խնդրեցին մինիստրին, որ ի սէր գպրոցի անդորրութեան—պաշտպան կանգնի է կառավարչական կարգով աքսորված գպրոցի ներկայացուցիչներին։ Պրոֆէսոր պատգամաւորները միջնորդեցին նոյնպէս, որ իրանց համաժողովները կայանան պարբերաբար։ Մինիստրը պատասխանեց, որ այդ բանը մտնում է մինիստրութեան մասդրութիւնների մէջ։—Այսօր բացվեցին ծախսոտ արդիւնաբերողների և ծախսոտային գործարանատէրերի նիստերը՝ ծխախոտի ակցիզը աւելացնելու հարցը քննելու համար—Մայսին թոյլատրվելու է մանաւոր խանութներին վաճառել բոլոր գնողներին առանց առանձին թոյլատրության վկայականների օրէնաւոր սպիրտ լուսաւորության համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 մարտի։ Պաշտօնական։ Մինիստրների Խորհուրդը յանձնարարել է մինիստրներին և առանձին տեսչների գլխաւոր կառավարիչներին, որ նրանք որոշեն իրանց առաջիկայ գործունէութեան ծրագիրները, որպէս զի մինիստրութեան խորհրդում այդպիսի օրինագծերի մշակման, որ մտնելու են Պետական Դումայի։ Այդպիսի յանձնարարութիւն կատարելու համար, ֆինանսների մինիստրը ներկայացրել է խորհրդին հարկերի ծրագրի մի նախագիծ։ Ռուսաստանը անցնում է պատմական մի ծանր դարձուածքի։ զինուորական անագին ծախքերը, կենտրօնական նահանգների անբերրիութիւնները և խռովութիւնները, որ գիտակցօրէն ուղղված են երկրի տնտեսական քայքայման, թուլացրին ազգաբնակութեան վճարելու ոյժերը։ Այսպիսի մի ժամանակ Պետական մուտքերը և ծախքերը հաւասարեցնելու աշխատանքները չափազանց դժուարին են։ Ուստի անհրաժեշտ է ներկայացնել անչեռնազկի ծախքերը, յետաձգել օգտակարը—բայց անհրաժեշտները, և դադարեցնել աւելորդները։ Այս գործի սկզբնաւորութիւնը պէտք է պահանջէ Դումային, որը հաւանօրէն ֆինանսների մինիստրութեան ցոյց կը տայ լիակատար աջակցութիւն։ Եթէ անհրաժեշտ է կրճատել ծախքերը մի կողմից, բայց միւս կողմից չէ կարելի չը նախատեսել մի քանի ծախքեր աւելացնելու անհրաժեշտութիւնը այնպիսի կարիքների համար, ինչպիսին են, օրինակ, ժողովրդական սկզբնական կրթութիւնը և շինական ազգաբնակութեան կազմակերպութիւնը։ Գիւղացիութեան վճարելի ոյժերը պահպանելու օգտին արված յետ գնման տուրքի վերացնելը 7 միլիոն ռուբլով պակասեցրեց գանձատան մուտքը։ Այս մնացորդը լրացնելու և ապագայում ծագող պահանջներին բաւարարութիւն տալու համար անհրաժեշտ է նոր մուտքի աղբիւրներ փնտրել։ Այդ աղբիւրները մեզ մօտ գլխաւորապէս հարկային բնաւորութիւն պէտք է կրեն, որովհետև գանձարանի մասնաւոր-ուղղակի հարկերի լայն զարգացումը յամենայն դէպս մօտիկ ապագայում չի լինի, թէև մինիստրութիւնը չէ կարող կողմնակից չը լինել այն քանի, որ ցանկալի է աւելի շատ անտեսապէս օգտուել երկաթուղիներից, պետական անտառներից և հանքային գործարաններից։ Ի նկատի ունենալով վերոյիշեալները, ֆինանսական մասի վարչութիւնը ընդունեցաքէկրճատել մի քանի ծախքեր։ Այս բարենորոգումը իրագործելու դէպքում որպէս առաջնորդող պէտք է ծառայեն հարկաբաժանութեան հաւասարեցնելը և չքաւոր ազգաբնակութեան ընդարձակ խաւերի հարկատուութեան բեռը թեթևացնելը։ Առաջին իսկ հերթում ֆինանսների մինիստրը վերաքննութեան կառաջարկէ և հողային տուրքի բէֆորմը՝ հողերը գանձան տեղերում հաւասար կերպով բաժանելու մտքով, քաղաքային անշարժ ունեղի հարկի բէֆորմը, պրօմիսլեան հարկը, կանոնաւոր եկամտային հարկի գործադրութիւնը և ժառանգական տուրքերի հարցերը։ Իսկ ինչ վերաբերում է կողմնակի հարկաբաժանութեան, չը նայած մի քանի քաղաքանտեսների քննադատութեան, պէտք է նա պահպանվի, որովհետև այդ բանի վերացումը թեր ևս պատճառ դառնայ պետական բիւրեղի խախտման, ստեղծելով նրա մէջ դժուար իրագործելի պահանջներ։ Մտադրվում է աւելացնել ծխախոտի ակցիզը, ինչպէս և մտցնել թղթէ հարկ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԴՈՒԷՅ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Նուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և մկանաց. հ.
Ե. Մ. ԺՈՒՕՎԱՆ—1½—10 ժ. աչքի. ներքին և նեղատալին։
Մ. Դ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՄԵՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Ե. Ի. ԴԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ն. Գ. ՂԱՐԱԳՈՇԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և նեղատալոց հ.
ՓՐԵՆՖԻՇԵՆ Ա. Ի. ՇԱՐԵՐԻՆԻՆ—1½—2 ժ. մանկատալոց հիվանդանոցի և կանանց հ.
Դ. Ե. ԴՈՒՐԳԻՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
ԵՐԵԿՈՆՈՒՐԸ
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ. և ծաղկաստ.։
Ա. Ի. ԱԲԻԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԻ ԶՆ—7—7½ ժ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համաձայնվելի (կօնսուլտ) և օգնության համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մանրագէտ միզային և սիֆիլիսական հիւանդութիւնների վերադարձել է արտասահմանից և ընդունում է հիւանդներին ցերեկվայ 12—1 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը։ Կուկիա Սեմիոնովսկի փողոց № 20։
(ա.օ.) 4—10

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մանաւորապէս սիֆիլիս, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտովսկի և Պասկեվիչ փող. № 33/15 տ. Միրզիանանի (նախկին օրիորդաց 3-դ դիմաց. տուն)։
(ա. օ.) 52—100

ԷԼԷԿՏՐՕ-ԲՈՒԺԱԿԱՆ
ԿԱԲԻՆԷՏ
Բժիշկ Միխայել Գեղեվանովի
Զդային հիւանդների ընդունելութիւնը Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը, Երեկոյեան ժամի 6-ից—7-ը, Կօրգանովսկայա փող. № 20 Վերայում։ Սեփական տ., տէլէֆօն № 791։ (ա. օ.) 91—150

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Զորեքշաբթի, մարտի 15-ին, երեկոյեան ժամի 9-ին, նշանակված է անդամների ընդհանուր ժողով՝ ընտրելու պակաս թեկնածուներին, որպէս անդամներ առաջարկված անձանց քուէարկելու, նոյնպէս և քննելու և հաստատելու համար 1906 թ. անելիք ծախսը և ուրիշ տնտեսական հարցեր։ (10,15) 3—3

ՂԱՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԷՐԷԹԻ հայոց վիճակային կօնսիստօրիայի ատենի մէջ նշանակված է ամուրդ այս ամսվայ մարտի 17-ին, առանց կրկնամուրդի, կապալով տալու եկեղեցական կղզին, որ գտնվում է Վանքի աւագ եկեղեցու հանդէպ։ Ամրդին մասնակցող ցանկացողները պէտք է ներկայացնեն պահանջած դրաւական։
Անդամ կօնսիստօրիայի Զ. քահ. Զարդեղեանց
(չ.հ.ու) 1—3

Ազատութեան կողմնակիցներին
«ՅԱՓԱՂ»
պիանօի համար մարշ
ԼԷՕՆԻԴ ԿՆԻՆՅԻ
Ծախվում է ամեն երեկոյական խանութներում նոյնպէս և հեղինակի մօտ (Михайловскій пр. 55),
ԳԻՆՆ Է 60 ԿՕՊ. 1—3

«ԳՈՒՏՏԷՆԲԷՐԳ» ԳՐԱՄԱՆՈՒԹՈՒՄ
վաճառվում են հետևեալ գրքերը.
Ի՞նչ է կանանց նպատակը, Շախ-Մուրադեան 30 կ.։
Ամուսնացած կնոջ ներկայ դրութիւնը, թարգ. Յովհաննէսեանի 10 կ.։
Բանաւորական հարցը, Զօմբարտի, թարգմ. Արեղեանի 40 կ.։
Ժամանակակից ազգայնութիւն, կաուցկի, թարգ. Պապովեանի 15 կ.։
Ի՞նչ է ազգութիւնը, Ռընանի, թարգ. Ղարագեօզեանի 20 կ.։
Ինքնավարութիւն և Զեմսվօ, Բէլօկոնսկու, թարգմ. Զալալեանի 15 կ.։
Արամի պակը, Շահրիարի. 6 կ.։
Տնտեսական զրոյցներ, Կարիշեվի, թարգմ. Զալալեանի 40 կ.։
Տնտեսական զարգացման ֆազերը, Իշխանեանի 15 կ.։
Ընդհանուր ընտրողական իրաւունքը, թարգմ. Մինքայէլեանի 10 կ.։
Ազգայնութիւն և նրա պրինցիպները, Առաքելեանի 30 կ.։
Կնոջ ներկայ և ապագայ դրութիւնը, Բէբէլի, թարգ. Գ. Շահնազարեանի 10 կ.։
Կօլօնիական քաղաքականութիւնը անցեալում և ներկայում, Կաուցկի, թարգմ. Խանազատեան 40 կ.։
Արդարութեան նշանակութիւնը կեանքի մէջ, Լալայեանի 10 կ.։
Կանանց ներկայ դրութեան մասին, թարգ. Կասեանի 15 կ.։
Կինը և նրա տնտեսական դրութիւնը, թարգմ. Եսայեանի 15 կ.։
Կանանց հարցը Եպանիայում, թարգմ. Թաւլրեանի 25 կ.։
Տնտեսական և սոցիալ-քաղաքական հարցեր, Զօմբարտի 10 կ.։
Իդեալիզմ և մատերիալիզմ, Խանազադի. 10 կ.։
Կապիտալ և կապիտալիզմ, թարգմ. Թառայեանի 12 կ.։
Իրաւունքի ծագումը և պատմութիւնը, թարգ. Թառայեանի 10 կ.։
Անգլիայի քաղաքական և հասարակական կեանքը, Հ. Առաքելեանի 15 կ.։
Այժմ ամեն մարդ հետաքրքրվում է քաղաքատնտեսական և ընկերվարական խնդիրներով, թարգ. Թառայեանի 10 կ.։
Գումարով գնողներին զիջում է լինում։
Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ «Гуттенбергъ» Г. Галустяну. 2—2

ԿԵՖԻՐ
Բժիշկներ Սօկոլսկի, Գօտերստեդի, Շմիտ, Բիլի և ուրիշ հետազօտութիւններից երևում է, որ կեֆիրը չափազանց նպաստում է կշռի աւելանալուն. կեֆիրը գործ է ածվում թոքերի հիւանդութեան, աղիքների կատառի, արեան պակասութեան, ջրջրուկի, (золотуха) դալկահարութեան, ուժասպառութեան ժամանակ և առհասարակ լաւ ներգործութիւն է ունենում ջղերը հանգստացնելու վրա։ Կարելի է ձեռք բերել Օ. Կօրօնայի գործարանում, Լօրիս-Մելիքեանի փող. սեմինարիայի դիմաց։ Ցանկացողներին կարելի է ուղարկել իրանց բնակարանը։
(հ.կ.) 11—20

Լոյս տեսան
1) ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԻԿԻ մեծադիր լուսատիպ պատկերը 30 կօպ.։
2) ԱՐԱՄԻ ՊՍԱԿԸ (հայ-թուրքական ընդհանրութիւններից մի պատկեր), 6 կ.։
Գումարով ցանկացողներին 20% զիջումն կը լինի առանց ճանապարհածախսի. կարելի է և վերադիր։
Դիմել՝ Фото-цинкографію С. Согомоняна, Тифлисъ, Базарная, 20. 4—5

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱԶԳԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8։ (ե.ո.)44—100

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մանրագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպեկտի և Կարետսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կարետսկի փողոցից № 2,
(ա. օ.) 108—300

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը հաշված են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի մէջինը Թիֆլիսի ժամանակով)։

	Գօսսային	Մարգասար.	Արաղ.	Ապրանք.
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցերը.	11 ժ. 03 ր. ցերը.	12 ժ, 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 10 » »	5 ժ. 31 ր. առ.	1 ժ. 30 ր. ցիշ.	9 ժ. 30 ր. գիշ.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 55 » »	6 ժ. 07 ր. առ.	—	—
Թիֆլիսի ժամանակով)	12 » 53 » »	7 ժ. 05 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 14 ր. գիշ.	7 ժ. 07 ր. երբ.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 15 » »	5 ժ. 24 ր. ցերը.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. երբ.	6 ժ. 44 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 48 ր. առ.	5 ժ. 35 ր. ցերը.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 46 ր. առ.	6 ժ. 33 ր. ցերը.	11 ժ. 38 ր. գիշ.
Բաղու հասնելը	1 » 30 ր. ցերը.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցերը,
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 18 ր. գիշ
Ալեքսանդրօպոլից դուրս գալը	7 » 38 » երբ.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 10 » առ.	—	—	4 ժ. 48 ր. ցերը.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 22 » գիշ.	—	—	1 ժ. 18 ր ցերը.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 20 » »	—	—	2 ժ. 11 ր. ցերը.
Ալեքսանդրօպոլից դուրս գալը	10 » 15 » առ.	—	—	12 ժ. 50 ր. գիշ.
Կարս հասնելը	1 » 55 » ցերը.	—	—	4 ժ. 24 ր գիշ.
Երևան հասնելը	4 » 21 » »	—	—	6 ժ. 48 ր. առ.

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Սրանով յայտարարվում է, որ հինգշաբթի, մարտի 16-ին 1906 թ. ցերեկվայ ժամը 12-ին քաղաքային վարչութեան շինութեան մէջ ամուրդ է նշանակված կապալով տալու 1) 1-ին քաղաքամասում 3 դես. 1748 քառ. սաժ. քաղաքի հողը որ և կապարտուն իրաւունք կունենայ աւազ, խիճ, խիպար և սառոյց ձեռք բերել. 2) Անդրէվսկի փողոցի քաղաքի հողը՝ 450 քառ. սաժ. տարածութեամբ՝ փայտի պահեստի համար և 3) քաղաքային անասնապահ սրահի շինութիւնը և թէյատուն պահելու գործը։ Ցանկացողները կարող են ծանօթանալ մանրամասնութիւնների հետ ընդունելութեան օրերը քաղաքային վարչութեան 4-րդ մասի դիւանատունը ցերեկվայ ժամը 10-ից մինչև 3-ը 2—2

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՇԵՐԱՄԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆԻ
ՊԱՀԵՍՏՈՒՄ,
Մուշտայիդ այգում, վաճառվում է ՇԵՐԱՄԻ ԸՆՏԻՐ ՍԵՐՄ դեղին և ապիտակ տեսակի, մսխալը 40 կօպ.
Թթենիներ, այգեպահական և շերամապահական գործիքներ
ՁԵՌՆԱՐԿՆԵՐ ԵՒ ՀԱՒԱՔԱԾՈՒՆԻՐ,
Մեղուապահական գործիքներ,
ԴԱԴԱՆ-ԲԼԱՏՏԻ ԵՒ ԳԼԽՈՑԻ ՓԵԹԱԿՆԵՐ, ԻՐՈՒՔԱՆՉԻՒՐԸ 4 ՌՈՒԲԼՈՒԾ ՍԿՍԱԾ։ Մեծ քանակութեամբ գնողներին զիջում է լինում։
Արհեստական մոմաթերթ, (вощина) գործիքներ, ցենտրաֆուգներ, նկարներ, քարտէզներ, ձեռնարկներ և այլն։
(Ե.Հ.Շ.) Գների ցուցակը ուղարկվում է ՁՐԻ։ 4—25

ՀԻՆԳՇԱԲԹԻ, ՄԱՐՏԻ 23-ԻՆ
Թիֆլիսի ժողովարանի դահլիճում
Յօգուտ Գանձակի հայ աղեստալների կայանալու է մի դրամ.-երաժշտական երեկոյթ
ՎԻՃԱԿԱԽԱՂՈՎ
բարեհաճ մասնակցութեամբ երգ